

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Ապատեղակատուքեան Փուչիկները կը Պայթին՝ Մէկ Առ Մէկ

Հայաստանի նախկին մերժուած ռեժիմի ներկայացուցիչները ու անոնց ազդեցութեան տակ գտնուող լրատուամիջոցները կը շարունակեն իրենց ապատեղակատուքեան արշաւը Հայ ժողովուրդի դէմ: Մինչ Փաշինեանի իշխանութիւնը զբաղած է երկրի տնտեսութեան վերականգնմամբ, բանակի հզօրացմամբ, կորուպցիայի դէմ պայքարով, Հանրապետական ու քրջարեանական ճամբարի կարկառուն դէմքերը լծուած են ներքին մթնոլորտը ապականելու արշաւի:

Վարչապետի Լուս Անճելըս եւ ապա Նիւ Եորք կատարած արդիւնաւետ այցելութիւնները չմարտելով, անոնք կը փորձեն նստեցնել այնպիսի իրողութիւններ, որոնք ժողովուրդը տեսաւ իր իսկ աչքերով: «Լուս Անճելըսի հաւաքի մասնակիցներու թիւը շատ քիչ էր, ճաշկերոյթի տոմսերը չեն վաճառուած եւ համայնքի կազմակերպութիւններուն պարտադրուած սեղան առնել, Քալիֆորնիոյ կառավարիչը մերժած է հանդիպիլ Փաշինեանի հետ, Գոնկարտի անդամները ներկայ չեն եղած հանդիպումներուն», այս են ընդդիմադիր մամուլի գլխաւոր միւթերը, հակառակ որ, ըսուածներէն ոչ մէկը կը համապատասխանեն իրականութեան: Ընդհակառակը՝ Փաշինեանի Միացեալ Նահանգներ այցելութիւնը իր հայկական եւ միջազգային տարողութիւններով մեծ յաջողութիւն էր Հայաստանի եւ մեր համայնքին համար:

Մեծ յաջողութիւն էր նաեւ այս օրերուն Երեւանի մէջ տեղի ունեցած Եւրասիական Տնտեսական Միութեան գագաթի ժողովը, որուն մասնակցելու համար Հայաստան ժամանած էին եօթը երկիրներու ղեկավարներ: Իսկ ի՞նչ կը նախատեսէին նոյն մունետիկները՝ Ռուսաստանի նախագահը կրնայ չմասնակցիլ ժողովին, եթէ գալու ըլլայ ան կ'ուզէ հանդիպում ունենալ բանտը գտնուող Քոչարեանի հետ, Փութինի այցը կարճ պիտի տեւէ եւ Փաշինեանի հետ առանձին հանդիպում ծրագրուած չէ: Մէկ խօսքով Ռուսաստանը խիստ դժգոհ նոր իշխանութիւններէն: Շատ երկար սպասելու պէտք չէր ու այս կանխատեսումները եւս փուչիկի նման պայթեցան անոնց երեսին: Ռուսաստանեան մամուլի համաձայն երեւանեան այս ժողովը ամենէն յաջող էր ԵԱՏՄ-ի հնգամեայ պատմութեան մէջ:

Չգալի է որ, որքան ժամանակը անցնի, նախկին իշխանութեան ներկայացուցիչները այնքան աւելի ծանր կը տանին իրենց նախկին պաշտօններու ու դիրքերու կորուստը, որոնց շնորհիւ քսան տարի կողոպտեցին երկիրը ու ժողովուրդը մատ-

## Ութը Երկիրներու Ղեկավարներու Մասնակցութեամբ Երեւանի Մէջ Կայացաւ ԵԱՏՄ Գագաթի Ժողովը

Հոկտեմբեր 1-ին Երեւանի նախագահական նստավայրին մէջ կայացաւ Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհուրդի նիստը, որուն մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած էին 8 պետութիւններու առաջնորդներ:

ԵԱՏՄ Բարձրագոյն խորհուրդի նեղ կազմով նիստին մասնակցեցան ԵԱՏՄ անդամ երկիրներու ղեկավարները՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ռուսիոյ Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին, Պելաուսիոյ նախագահ Ալեքսանդր Լուքաշենքօ, Ղրղզստանի Հանրապետութեան նախագահ Սորոնպա Ժէնպեկով, Ղազախստանի Հանրապետութեան նախագահ Բասիր ժոմարթ-թոբաեւ եւ Եւրասիական տնտեսական յանձնաժողովի անձնակազմի նախագահ Տիգրան Սարգսեան:

Ընդլայնուած կազմով նիստին՝ հրաւիրեալ երկրի ղեկավարի կարգավիճակով կը մասնակցէին նաեւ Իրանի նախագահ Հասան Ռոհանի եւ Սինկափուրի Հանրապետութեան վարչապետ Լի Սյեն Լուն: Մոլդովայի նախագահ Իլոր Տոտոն նիստին կը մասնակցէր՝ որպէս դիտորդի կարգավիճակի մէջ գտնուող երկրի ղեկավար:

Նիստի բացման խօսքով հանդէս եկած է Եւրասիական տնտեսական միութեան մէջ նախագահող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որ նշած է, մասնաւորապէս, թէ երեւանեան նիստը բացառիկ է այն առումով, որ կը մասնակցին Իրանի եւ Սինկափուրի ղեկավարները, եւ, փաստօրէն, միութիւնը կ'ընդլայնէ այլ երկիրներու հետ համագործակցութիւնը:

Եւրասիական տնտեսական



Երեւանի մէջ՝ ԵԱՏՄ գագաթի ժողովի նիստերու դահլիճը

միութեան Բարձրագոյն խորհուրդի ընդլայնուած կազմով նիստին քննարկուած է ԵԱՏՄ 2018-ի պիւտճէի կատարողականը, ԵԱՏՄ 2020-ի պիւտճէն, ԵԱՏՄ միասնական ելեւմտական շուկայի կազմաւորման հայեցակարգը, ԵԱՏՄ ներքին շարք մը փոփոխութիւններ եւ Բարձրագոյն խորհուրդի յաջորդ նիստի վայրը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որպէս ԵԱՏՄ-ի մէջ նախագահող եւ հիւրընկալող երկրի ղեկավար, ողջունելով նիստի մասնակիցները՝ նշած է, որ իր համար մեծ պատիւ է հերթական նիստի ընթացքին անոնց ողջունել Երեւանի մէջ:

«Մեր կազմակերպութիւնը, որն արդէն 5 տարեկան է, շարունակում է տարեցտարի աւելի ամուր դառնալ: Այն արդէն ցոյց է տուել իր կենսունակութիւնը եւ գրաւչութիւնը՝ որպէս միջազգային

միութիւն», - ընդգծած է ՀՀ վարչապետը:

Արդիւնաւէտ համագործակցութեան համար Նիկոլ Փաշինեանը կարեւորած է ԵԱՏՄ շրջածիրէն ներս աշխատութի ազատ տեղաշարժի համար առկայ արգելքները վերացնելուն ուղղուած միջոցները, որոնք կը խոչընդոտեն աշխատութի միասնական շուկայի ձեւաւորման:

Անոր խօսքով՝ ելեկտրոնային թուային ստորագրութիւններու փոխադարձ ճանաչումը հնարաւոր մատակարարներու՝ ելեկտրոնային ձեւաչափով գնումներուն անխոչընդոտ մասնակցութիւնը ապահովելու համար նոյնպէս առանձնապատուկ ուշադրութիւն պահանջող առաջնահերթ հարցերն են, եւ անհրաժեշտ է բոլորի համար ըն-

## Ամերիկացի Գոնկրեսականներ Կը Պահանջեն Դադրեցնել Ատրպէյճանի Ռազմական Օգնութիւնը

ԱՄՆ Գոնկրէսի հայկական հարցերով համախմբումը Սեպտեմբեր 27-ին նամակով դիմած է ԱՄՆ պետական քարտուղար Մայք Փոմփեյդիին եւ պաշտպանութեան նախարար Մարք Էսփիէրին:

Նամակին մէջ յանձնարարութեամբ մտահոգութիւն յայտնած է Ատրպէյճանին տրամադրուող ռազմական օգնութեան ծաւալներու մեծացման եւ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ հաւասարակշռութեան խախտման կապակցութեամբ: Նամակը ստորագրած են Գոնկրէսականներ Ֆրենք Փալլոնը, ձեքի Սփիեռն ու Ատամ Շիֆը:

Հայկական համախմբումի ղեկավարները կոչ ըրած են ԱՄՆ պետական քարտուղարութեան եւ պաշտպանութեան նախարարութեան հաշուի առնել Ատրպէյճանի վերաբերեալ 1992 թուականին ըն-

դունուած 901 բանաձեւի փաստը, որ ամէն տարի 2002 թուականէն յատուկ փաստաթուղթով կը չեղարկուի պետական քարտուղարութեան կողմէ: Բանաձեւը կ'արգիլէ Ատրպէյճանին ամերիկեան ուղիղ օգնութեան տրամադրումը, քանի դեռ Ատրպէյճանի ղեկավարութիւնը քայլեր չի ձեռնարկեր Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման դէմ եւ չէ դադրեցուցած ռազմատենչ գործողութիւնները վերջիններուս նկատմամբ:

Նամակին մէջ գոնկրէսականները կը խնդրեն անմիջապէս դադրեցնել ռազմական օգնութիւնը Ատրպէյճանին, վերանայիլ 901 բանաձեւի վերացման կարգը եւ մանրամասն տեղեկութիւն տրամադրել՝ Ատրպէյճանին տրուող օգնութեան վերաբերեալ:

## 2020 Թուականի Հայաստանի Պիւտճէն 4 Միլիար 500 Միլիար Ընդհանուր Ընդհանուր Ընդհանուր Ընդհանուր

2020 թուականին Հայաստանի պիւտճէն կը նախատեսուի շուրջ 4 միլիար տոլար ծախսերու բաժինով, իսկ եկամուտները 420 միլիար տոլար պակաս: Թէ՛ ծախսերը, թէ՛ եկամուտը նախորդ տարուայ համեմատութեամբ աւելացած են 13-14 տոկոսով:

«Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր, տնտեսագետ Արտակ Մանուկեան այս մասին ըսած է որ. նման պիւտճէ երբեք չենք ունեցած ու այդ կը նշանակէ որ ամէն տարի աւելի ու աւելի կը մեծնայ մեր տնտեսութիւնը, բայց չափազանց կարեւոր է այս առումով նաեւ դիտարկել, որ այստեղ այն պիւտճէն է, ուր արդէն ստուերային տնտեսութեան մակարդակը կը ճատուած է:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ընդդիմութիւնը Հասկանում է, Թէ Չի Հասկանում Իրավիճակը

Վարչապետ Փաշինեանի՝ ամերիկեան լրատուամիջոցներին մէկնին տուած հարցազրոյցում արտայայտած այն միտքը, թէ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վերջնարդիւնքը պիտի բաւարարի եւ՝ Հայաստանի, եւ՝ Արցախի, եւ՝ Ատրպէյճանի ժողովուրդներին, հերթական անգամ քարոզչական մանիպուլացիաների ենթարկուեց ընդդիմադիր քարոզչամիջոցների կողմից: Եղան եւ՝ զուտ մարդկայնօրէն հասկանալի դժգոհութիւններ («Հասկացանք, ո՞նց թէ կարգաւորումը պիտի բաւարարի նաեւ ատրպէյճանցիներին»), եւ՝ «խորիմաստ վերլուծութիւններ» (Իբր՝ դա լուրջ նահանջ էր Ստեփանակերտում հնչեցուած «Արցախը Հայաստան է, եւ վերջ» դիրքորոշումից):

Ի՞նչ է տեղի ունենում իրականում: Նիկոլ Փաշինեանն, իհարկէ, կարող էր խուսափել սեփական երկրում քննադատութիւնների ենթարկուելու հեռանկարից եւ յայտարարել, որ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը պիտի բաւարարի Հայաստանի եւ Արցախի ժողովուրդներին, իսկ ատրպէյճանցիներին այդ կարգաւորումը կը գոհացնի, թէ ոչ՝ իրենց պրոբլեմն է: Սա, անշուշտ, կը լինէր շատ աւելի «հայրենասիրական» դիրքորոշում: Բայց գործնականում դա ոչինչ չէր տա, որովհետեւ ակնյայտ է, որ եթէ վերջնական կարգաւորման որեւէ տարբերակ ատրպէյճանական կողմի համար անընդունելի լինի, նրանք պարզապէս չեն ընդունի այդ տարբերակը, այսինքն՝ հակամարտութիւնը չի կարգաւորուի (յամենայն դէպս՝ բանակցութիւնների ճանապարհով): Այլ կերպ ասած՝ հակամարտութեան երեք կողմերին էլ բաւարարող տարբերակը խաղաղ կարգաւորման միակ ձեւն է: Յատուկ շեշտում ենք՝ միակ: Եւ եթէ ՀՀ վարչապետը նման բան է յայտարարում, նշանակում է՝ Հայաստանն իսկապէս ձգտում է հասնել խաղաղ կարգաւորման (եւ ոչ թէ ձեւական յայտարարութիւններ է անում՝ իր գերինդիրը համարելով գործընթացը ձգձգելու ու ներկայիս փաստացի պատերազմական վիճակը հնարաւորինս երկար պահպանելը):

Հիմա հարցին նայենք ատրպէյճանական կողմի տեսանկիւնից: Այդ երկրի նախագահն առայժմ համարժէք յայտարարութիւն չի

արել, այսինքն՝ չի ասել, որ հակամարտութեան կարգաւորումը պիտի բաւարարի նաեւ Հայաստանին ու Արցախին: Այլ կերպ ասած՝ Ատրպէյճանը համարում է, որ վերջնական կարգաւորումը պիտի բաւարարի միայն իրենց: Բայց Ատրպէյճանում շատ լաւ հասկանում են, որ հայկական կողմը երբեք չի գնայ այդպիսի տարբերակի, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ ատրպէյճանական կողմը հրաժարուած է կատարել իր քայլը այն միակ ճանապարհին, որը հնարաւոր կը դարձնի հակամարտութեան խաղաղ կարգաւորումը: Այս իմաստով իրավիճակը բաւականին պարզ է, եւ ատրպէյճանական կողմի լուծութիւնը միջազգային հանրութեան համար ակնյայտ է դարձնում, որ հայկական կողմը պատրաստ է խաղաղութեան, ու հենց Ատրպէյճանն է ապակառուցողականը: Իսկ սա բանակցութիւնների սեղանի շուրջ բաւականին կարեւոր գործօն է:

Բայց նաեւ այնպէս չէ, որ հայկական կողմն առաջին քայլն անելով միակողմանի (կամ՝ ոչ համարժէք) զիջումներ անելու պատրաստակամութիւն է յայտնում: Հակառակը՝ այս հարցում մեր դիրքորոշումը բաւականին կոշտ է եւ հնչում է մօտաւորապէս այսպէս. եթէ ատրպէյճանական կողմը պատրաստ է ընդունել, որ վերջնական կարգաւորումը պիտի բաւարարի նաեւ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդներին՝ եկէք բանակցենք ու հասնենք խաղաղութեան, իսկ եթէ ատրպէյճանական կողմը դա չի ընդունում՝ ուրեմն Արցախը Հայաստան է եւ վերջ, գնացէք, ինչ ուզում էք՝ արէք:

Սա, իհարկէ, չի նշանակում, որ եթէ ատրպէյճանական կողմն ընդունում է մեր դիրքորոշումը, ուրեմն «Արցախը Հայաստան է, եւ վերջ» պնդումը «չեղարկուած է»: Որովհետեւ եթէ «Արցախը Հայաստան չլինի» կամ միջազգայնօրէն ճանաչուած անկախութիւն չունենայ, այդ տարբերակը չի բաւարարելու Հայաստանի եւ Արցախի ժողովուրդներին, հետեւաբար՝ խաղաղութեան համաձայնագիրն էլ չի ստորագրուելու: Բայց սա արդէն յետազգայ բանակցութիւնների խնդիր է, իսկ առայժմ գնդակն Ատրպէյճանի դաշտում է: Որքան էլ մեր ընդդիմութիւնը ձեւացնի, թէ չի հասկանում դա:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Փաշինեանից Դժգոհութիւն Պարուն Եւ Հայաստանում

ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայում Նիկոլ Փաշինեանի ելույթից, մասնաւորապէս դրանում Արցախեան հարցին անդրադարձից յետոյ տարածուած է տեսակէտ, թէ անդրադարձը թուլացնում է Հայաստանի բանակցային դիրքը, Ատրպէյճանի մօտ թողնում է Հայաստանի թուլութեան տպաւորութիւն: Մասնաւորապէս, այդ գնահատականի «հիմքը» վարչապետի յայտարարութիւնն է, որ կարգաւորումը պէտք է ընդունել լինի թէ՛ Հայաստանի ու Արցախի, թէ՛ Ատրպէյճանի ժողովուրդների համար:

Ինչո՞վ է այդ յայտարարութիւնը վկայում Հայաստանի թուլութեան մասին: Խօսել այդ մասին՝ կը նշանակի ասել, որ ընդհանրապէս ցանկացած կարգաւորման գործընթաց ինքնին թուլութեան վկայութիւն է մասնակցողի համար: Որովհետեւ, կարգաւորման գործընթացն ու բանակցային պրոցեսն ինքնին ենթադրում են, որ դրական որոշման համար պէտք է այդ որոշումը լինի բոլոր կողմերի համար ընդունելի: Բայց Հայաստանում կարծես թէ որեւէ քաղաքական միակողմ, կամ հասարակական-քաղաքական սուբեկտ չի յայտարարում, որ Հայաստանը պէտք է դուրս գայ գործընթացից եւ յայտարարի, որ չի մասնակցում որեւէ բանակցութեան:

Ըստ այդմ, Նիկոլ Փաշինեանի ազդարարած մօտեցման հանդէպ գնահատականները դառնում են պարզապէս բառախաղ-մանիպուլացիա: Աւելին՝ դրանք տարօրինակ են այն դէպքում, երբ Պաքուն ինքը դժգոհում է Երեւանի դիրքորոշումից ու քաղաքականութիւնից եւ յայտարարում, թէ չկայ կարգաւորման կամ բանակցային առաջընթացի նպատակ: Ինչո՞ւ է դժգոհում Պաքուն: Որովհետեւ Ատրպէյճանը շատ լաւ է հասկանում, որ Հայաստանի յետիոտանական ձեւակերպումներն ու նշաձողերը իրականում բխում են լեգիտիմ իշխանութեան ուժից, եւ դրանք ստանում են առաւել կոշտ բնույթ, քան եղել են մինչ այդ: Դա թերեւս հասկանում են նաեւ Հայաստանում, այն շրջանակները, որոնք դրանք դարձնում են քննադատութեան թիրախ: Հասկանում են, բայց քննադատում, թերեւս այն պատճառով, որ նրանց խնդիրը Արցախի հարցը չէ, այլ արդէն այդ քննադատութիւնը կը լինէր միշտ, իսկ մինչեւ յետիոտանութիւնը՝ առաւել կոշտ: Նրանց խնդիրը հենց քննադատութիւնն է, ինչի համար էլ օգտագործում են ցանկացած բան, որովհետեւ եթէ Փաշինեանը «գրողի ծոցն» ուղարկեր Ատրպէյճանին եւ յայտարարէր, որ Հայաստանը բանակցելու է միայն ստատուս-քուոյին Ատրպէյճանի համա-

ձայնութիւնը ստանալու համար, նրանք դարձեալ քննադատելու էին՝ այս անգամ միջազգային հանրութեան, միջնորդների վրայ «թքած ունենալու» համար: Այստեղ խնդիրն այն է, որ Հայաստանում չի ձեւաւորում Արցախի հարցի վերաբերեալ իրական քաղաքական քննարկումների դաշտ, իրական «դիսկուրս»:

Հարցը շարունակում է լինել քաղաքական մանիպուլացիաների, իմբային շահերի սպասարկման յարմար գործիք, լինելով հանրութեան համար զգայուն լար, որի վրայ խաղալը քաղաքական առումով թոււմ է գերշայակէտ: Եւ դա այն դէպքում, երբ անցեալ՝ գործնականում քառօրյա դարը մի շարք հանգրուաններում վկայել է, որ Արցախի հարցի վրայ կառուցուած ներքաղաքական խաղը իրականում դատապարտուած է լաւագոյն դէպքում անյաջողութեան, գրոյական արդիւնքի, որովհետեւ յայտանի եւ Արցախի ժողովուրդն է, եւ որքան էլ նրան տարիներ շարունակ նստացրել են պահեստայինների նստարանին, այն էլ որքան հնարաւոր է ծայրին, միեւնոյն է՝ իրական քաղաքականութեան ռեժիմում այդ ժողովուրդի դերը նուազեցնելու միջոց եւ հնարաւորութիւն չի ունեցել ոչ ոք: Այդ տեսանկիւնից, երբ Փաշինեանը յայտարարում է ժողովուրդների համար ընդունելիութեան մասին, Ատրպէյճանի ժողովուրդի իշխատակումով ընդամէնը դիւանագիտօրէն ընդգծում եւ առաւել անխոցելի է դարձնում Հայաստանի եւ Արցախի ժողովուրդի կամքի եւ վճռորոշութեան հանգամանքը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Նիկոլ Փաշինեանը Ասաց, Թէ Ինչին Հաւատալ. «Յեղաշրջման» Վախը

ՀԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Կայ տարածուած, կամ տարածուող մտայնութիւն կամ կարծիք, որ Ռուսաստանը կամ Կրեմլը սպասում է վարչապետ Փաշինեանի վարկանիշի անկման, Հայաստանում այսպէս ասած յեղաշրջում կամ հակադեմոկրատիկութիւն անելու համար: Այդ կարծիքն աւելի չաճախ սկսեց հնչեցուել Հայաստանում ԱԱԾ եւ ոստիկանութեան ղեկավարները փոփոխութեան շրջափուլում, եւ փոփոխութիւնն էլ կապուեց իբրեւ թէ յեղաշրջումը կանխարգելելու հետ:

Արդեօ՞ք այդպիսով այդ մեկնաբանութեան հեղինակները հա-

մարում են, որ Նիկոլ Փաշինեանի վարկանիշի անկումը տեղի է ունեցել եւ ըստ այդմ եղել է յեղաշրջման փորձ: Որովհետեւ, եթէ Կրեմլը սպասում է վարկանիշի անկման, ապա փորձն էլ թերեւս պէտք է արուի միայն դրանից յետոյ, որպէսզի ունենայ յաջողութիւն: Այլապէս լուրջ չէ յեղաշրջում անել հանրութեան մօտ 70 տոկոսի վստահութիւնն ունեցող վարչապետի դէմ: Ուրեմն, անկումը եղե՞լ է՝ այդ մտայնութիւնը տարածողների գնահատմամբ, թէ՞ մօտ է լինելուն:

Իրականում, այդ մասին խօսակցութիւնը թերեւս մօտ չէ իրականութեանը: Ոչ այն պատճառով, որ Կրեմլը կամ Ռուսաստանը չի

սպասում վարկանիշի անկման: Գուցէ սպասում է, կամ հաստատ կը լինեն սպասողներ, թէ Ռուսաստանում, թէ Հայաստանում, թէ գուցէ այլ երկրներում: Այստեղ խնդիրը անշուշտ մեկնաբանութեան դաշտում է, մատուցման:

Հարցն այն է, թէ ընդհանրապէս ինչի մասին է խօսքը: Եթէ տեղի է ունենում վարչապետի վարկանիշի այնպիսի անկում, որը թոյլ կը տայ նրա դէմ իրականացնել այսպէս ասած «յեղաշրջում»,

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ԱՆՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Վանեցեանը Յեռացուած Է Վարչապետի Որոշմամբ. Արմէն Գեորգեան

Լրագրողները Անվտանգութեան խորհուրդի (ԱԽ) քարտուղար Արմէն Գեորգեանէն հետաքրքրուած են՝ տեղեակ է արդեօք ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցեանի հրաժարականի պատճառներու մասին:

Ի պատասխան, ԱԱԽ քարտուղարը ըսած է, որ նշանակովի պաշտօններուն հրաժարական չըլլար: Ան նշած է, որ հրաժարական կ'ըլլայ աւելի շատ ընտրովի պաշտօններուն. «Ազատման դիմում կարող է լինել. այս հարցն այս տրամաբանութեան մէջ պէտք է դիտարկել: Բնականաբար, նա հեռացել է վարչապետի որոշմամբ, քանի որ վարչապետն է այդ պաշտօններուն նշանակումներ կատարում»:

Ինչ կը վերաբերի պարոն Վանեցեանի հրաժարականի պատճառներուն, Արմէն Գեորգեանը ըսած է, որ վարչապետը այդ մասին արդէն հնարաւորինս բաց



Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գեորգեան

խօսած է. «Գոհ չի եղել աշխատանքից, բնականաբար որոշում է կայացրել: Այո, որոշումն ամբողջութեամբ գտնուած է վարչապետի որոշման տիրոջութեամբ», - պարզաբանած է Ազգային Անվտանգութեան խորհուրդի քարտուղարը:

## Ամուլսարի Գործով Ի Յայտ Եկած Են Նոր Տուեալներ՝ Քննութիւնը Շարունակելու Համար

Հայաստանի Հանրապետութեան քննչական կոմիտէի նախագահի տեղակալ Արսէն Այվազեանը կը յայտնէ, որ վերջին շրջանին ի յայտ եկած են նոր տուեալներ, նոր տեղեկութիւններ, որոնցով պայմանաւորուած անհրաժեշտութիւն առաջացած է շարունակելու Ամուլսարի վերաբերեալ քրէական գործի նախաքննութիւնը:

Լրագրողներու հետ զրոյցի ժամանակ Արսէն Այվազեանը ընդգծած է, որ նախաքննութիւնը շարունակելու հիմք կը հանդիսանայ ՀՀ շրջակայ միջավայրի նախարարութեան ստացած գրութիւնը: «Մենք ստացել ենք համապատասխան գրութիւն, որում առկայ են նոր տեղեկութիւններ, նոր տուեալներ, որոնք անհրաժեշտ է գործի ընդհանրութեան մէջ նայել, դիտարկել, քննութիւն կատարել գրութեան մէջ ներառուած տուեալների մասին», - ըսած է Այվազեանը:

## Հայաստանի Նախկին Ոստիկանապետ Ալիկ Սարգսեանի Դէմ Մեղադրանքները

Մարտ 1-ի գործով մեղադրեալ, նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսեանը «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ չհէրքեց, որ 2008-ի մարտեան իրադարձութիւններէն ետք, երբ նշանակուած է Հայաստանի ոստիկանապետ, խորհրդակցութիւններ անցուցած է ստիկանութեան ներս: Ընդ որում՝ ոչ մէկ անգամ:

Մեղադրանքին մէջ խօսք կայ բարձրաստիճան ոստիկաններու խորհրդակցութեան մասին, ուր ցուցումներ տրուած են մարտեան իրադարձութիւններու ժամանակ տեղի ունեցածը պարտակելու եւ թաքցնելու վերաբերեալ: Եւ որ այդ ամէնի նպատակը եղած է թաքցնել նախագահ Ռոպերթ Քոչարեանի կողմէ ալլ անձանց հետ նախնական համաձայնութեամբ սահմանադրական կարգի տապալման գործի քննարկումները եւ յանցագործութեան հետքերը:

Նախկին ոստիկանապետի նկատմամբ խափանման միջոց ընտրուած է ստորագրութիւն չհեռանալու մասին: Գործը քննող Յատուկ քննչական ծառայութիւնը

Անոր խօսքով՝ շրջակայ միջավայրի նախարարութեան ստացած գրութիւնը առնչութիւն ունի Ամուլսարի վերաբերեալ քրէական գործին մէջ առկայ տուեալներու հետ: «Սրանով պայմանաւորուած՝ մենք կարիք ունենք այդ գրութեան մէջ նշուած տեղեկութիւնները քննարկել, ուսումնասիրել, համադրել նախկինում առկայ տուեալների հետ», - ըսած է ՀՀ ՔԿ նախագահի տեղակալը:

«Մենք ուսումնասիրում ենք նոր տուեալները՝ կապուած «Էլարտ»-ի կողմից տրուած եզրակացութեան հետ, եւ եթէ ի յայտ գան լրացուցիչ հարցեր, որոնք մասնագիտական բնոյթ են կրում, նման իրավիճակում մենք հնարաւորութիւն ունենք Քրէական դատավարութեան օրէնսգրքով նախատեսուած կարգով նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննութիւն», - ըսած է Այվազեանը:



Նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսեան

յայտարարած է, որ Ալիկ Սարգսեանն ու անոր ենթակաները՝ բարձրաստիճան ոստիկաններ, պարտակել են առանձնապէս ծանր յանցագործութիւնը:

Նախկին ոստիկանապետը հակադարձած է. - «Իմ կողմից որեւիցէ կեղծ տեղեկանք չի կազմուել, որեւիցէ կեղծ հաղորդագրութիւն չի ուղարկուել: Ես գործը կոծկող չեմ»:

## Որո՞նք Յառաջիկային Պիտի Հրաւիրուին Ապրիլեան Դէպքերը Ուսումնասիրող Քննիչ Յանձնաժողով

Ազգային ժողովէն ներս 2016 թուականի Ապրիլին ծաւալած ռազմական գործողութիւններու հանգամանքները ուսումնասիրող քննիչ յանձնաժողովը փակ ռեժիմով կարճ քննարկում կազմակերպած է:

Քննարկումէն ետք Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը լրագրողներու հետ զրոյցի ժամանակ տեղեկացուցած է, որ աշխատանքային հարց քննարկուած է:

Կ'ենթադրուի, որ միւս շաբաթ տեղի կ'ունենայ քննիչ յանձնաժողովի նիստ:

Որո՞նք քառաջիկային պիտի հրաւիրուին յանձնաժողով Անդրանիկ Քոչարեանը յատակ անուններ չէ հնչեցուցած:

«Մեր հաստատուած ցանկով հրաւիրեալների քանակը մեծ է, աշխատելու ենք, որ որեւէ մէկը, որը կարող է կարեւոր տեղեկատվութիւն տրամադրել, հրաւիրուի յանձնաժողով: Հարցեր են առաջանում, որ գերագոյն գլխաւոր հրամանատարին էլ պէտք է հրաւիրեն, որովհետեւ բանակային որոշումները սկսում են ներքեւից բարձրանում մինչեւ ամենավերին մակարդակը եւ, եթէ այդ հարցերը հետաքրքրում են յանձնաժողովին, բնականաբար այդ որոշումներ կա-



Անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

յացնողներին հրաւիրելու ենք՝ լինի գլխաւոր շտապի պետը, պաշտպանութեան այդ ժամանակուայ նախարարը, որոնք արժէքաւոր բան կարող են մեզ փոխանցել բոլորին հրաւիրելու ենք», - ընդգծած է Անդրանիկ Քոչարեանը:

Ըստ պարոն Քոչարեանի՝ քննիչ յանձնաժողովը մինչեւ Դեկտեմբեր ամիսը պէտք է աւարտէ աշխատանքները, բայց, եթէ 6 ամիսը չբաւարարէ, ապա սահմանուած կարգով պիտի դիմեն Ազգային ժողովին, որպէսզի ժամկէտը երկարաձգուի:

## Քննչական Կոմիտէի Կողմէ Վերաբացուած Է Պողոս Պողոսեանի Սպանութեան Գործը

Երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի թիկնապահ Աղամալ Յարութիւնեանի կողմէ 2001 թուականին սպանուած Պողոս Պողոսեանի գործով նոր վարույթ յարուցուած է եւ ուղարկուած Քննչական կոմիտէի Երեւան քաղաքի քննչական վարչութիւն:

Երեւան քաղաքի դատախազութեան դատախազ Հայկ Խաչատրեանի փոխանցմամբ, գործով երեւան եկած նոր հանգամանքը Բրիտանացի ՍԹԻՐ-ն Նիւթոնի ներկայացուցիչներու այս տարուան Սեպտեմբեր 12-ին գլխաւոր դատախազութիւն ներկայացուցած դիմումն էր:

Գործով վկայ 74-ամեայ քաղաքացին աւելի վաղ «Ազատութեան» եւս պատմած էր, որ տեսած է, թէ ինչպէս Քոչարեանի թիկնապարը «Առագաստ» սրճարանի գուզարանին մէջ դաժանաբար ծեծելով սպաննած է Պողոս Պողոսեանը այդ օրը սրճարան եկած Շառլ Ազնաւուրին եւ Ռոպերթ Քոչարեանին մօտենալու եւ «պրիւետ»,

Ռոպ» ըսելու համար: Գործով միակ ամբաստանեալ Աղամալ Յարութիւնեանը մեղաւոր ճանչցուած է անզգոյշ սպանութեան համար:

Մինչդեռ նոր երեւան եկած հանգամանքներով, վարույթը շարունակուած է խուլիկանական դրդումներով դիտաւորեալ սպանութեան յանցակազմով: Բացի այդ, Նիւթոնը կը վկայէ յանցանքի կատարման այլ անձանց մասնակցութեան մասին:

Դատախազը չի բացառեր, որ գործէն 18 տարի անց կալանքի տակ գտնուող երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանին հարցաքննելու անհրաժեշտութիւն կ'առաջանայ: Մեղադրանք առաջադրուելու հաւանականութեան մասին Հայկ խաչատրեանը չէ խօսած:

Պողոս Պողոսեանի սպանութեան գործով ուժի մէջ մտած դատական աթի կայ, եւ անոր վերանայման հնարաւորութիւնը պէտք է որոշուի նոր յարուցուած վարույթի քննութեան շրջափոխէն ներս:

## Վերաքննիչ Դատարանը Որոշեց Գազիկ Խաչատրեանը Պահել Կալանքի Տակ

Վերաքննիչ քրէական դատարանը մերժած է Պետական եկամուտներու կոմիտէի նախկին նախագահ Գազիկ Խաչատրեանը կալանաւորելու որոշման դէմ անոր պաշտպաններու ներկայացուցած բողոքը:

Բողոքի քննութիւնը վերաքննիչի մօտ աւարտած էր անցած ուրբաթ օր:

Խաչատրեանը կը մեղադրուի պաշտօնեական դիրքի չարաչանման եւ խոշոր չափերու վատմամբ մէջ: Գրեթէ ամբողջ կեանքը պե-

տական պաշտօններ զբաղցուցած Խաչատրեանի ընտանիքին կը պատկանի Galaxy ընկերութիւններու խումբը, որուն մէջ ներառուած են «Եուքոմ» հեռահաղորդակցութեան ընկերութիւնը, «Երեւան մոլ»-ը, «Խրոնոկրաֆ», «Մեկա թոյգ», «Փանտորա» խանութները, «Մեկա ֆուտ» ընկերութիւնը:

Գազիկ Խաչատրեանի փաստաբան Երեմ Սարգսեանի փոխանցմամբ՝ իր պաշտպանեալը չընդունիր իրեն առաջադրուած մեղադրանքը:

# ԼՈՒՐԵՐ

## Փայլան. Թուրքիոյ Ներքին Գործոց Նախարարութիւնը Պետք է Հանէ Պայմանը, Այլապէս Սա Կարելի Չ'է Ընտրութիւն Կոչել

Սեպտեմբեր 23-ին Թուրքիոյ ներքին գործոց նախարարութիւնը Պոլսոյ նահանգապետարանի միջոցով Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարան ուղարկած է 85-րդ պատրիարքի ընտրութեան վերաբերեալ գրաւոր կանոնագիրը (կանոնադրութիւնը):



**ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ԸՆԴՈՒՄ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՍԵՆՏԵՄԵՆԱԸ ԿԵ ԽՈՉՇԵՆՈՑԷ ԺՈՂՈՎՐԿԱՎԱՐ ԱՐԴԱՐ ԸՆԴՈՒՄ ԹԻՆԸ**

Թուրքիոյ հայոց պատրիարքի ընտրութեան կանոնադրութիւնը Թուրքիոյ հայոց պատրիարքութեան հասած է 23 սեպտեմբեր 2019-ին: 2019-ի կանոնադրութիւնը, ընդհանուր գիծերու մէջ կրկնելով հանդիման իր նախորդները, որպէս պատրիարքութեան թեկնածութեան նախապայման կը գիտ ըլլայ «Պոլսոյ հայոց պատրիարքութեան յանրապետական իրաւունքները պահպանելու» սկզբունքը: Այս կէտը ի պէտքէ իսկ կը խոչընդոտէ ժողովրդավար ու արդար ընտրութեան մը կազմակերպումը բոլոր թեկնածուներուն մասնակցութեամբ:

Նիւրթի շուքը հարցում ուղղեցիք ներքին գործոց նախարար Սիւլեյման Սոյլուին:

«Ինչո՞ւ արտասահմանի ընկալան թեկնածուներուն մասնակցութեան կարելիութիւն չեմ կոչուած մը աւելցուած է Հայոց պատրիարքի ընտրութեան կանոնադրութեան, երկարակ 1961-ի, 1990-ի եւ 1998-ի կանոնադրութիւններուն:»

«Ինչո՞ւ արգելք կը դրուի արտասահմանի ի իօրէ նախկին

Պատրիարքի թեկնածու առաջադրուելու համար կանոնադրութեան մէջ սահմանուած պայմաններէն նոր եւ խնդրայարոյց է միայն 3-րդը (թեկնածուն պէտք է ունենայ Պոլսոյ Հայոց պատրիարքութեան ենթակայ եպիսկոպոսի աստիճան), որ անհնար կը դարձնէ արտասահմանաբնակ թեկնածուներու առաջադրումը: Այս մասին գրած է ermenihaber-ը:

Այս թեմայի առնչութեամբ Թուրքիոյ ընդդիմադիր քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական» կուսակցութեան (ԺԴԿ-ՀԴԲ) հայ պատգամաւոր Կարօ Փայլանը հարցազրոյց տուած է «Bianet» թերթին, կատարելով շարք մը դիտարկումներ:

Փայլանը նշած է, որ եթէ ընտրութիւնը կատարուի այդ կանոնագրի համաձայն, ապա այն չեն կրնար կոչել ընտրութիւն:

Պատգամաւորը յիշեցնելով, որ Թուրքիոյ մէջ պատրիարքական բազմաթիւ ընտրութիւններ տեղի ունեցած են, որոնցմէ բոլորին մասնակցած են նաեւ աշխարհի հայ հոգեւորականները, ըսած է.

«Թուրքիոյ հայերէն բացի աշխարհի բազմաթիւ շրջաններու մէջ սեբաստացի, մալաթիացի, ատանացի, պոլսեցի հոգեւորական-

ներ կան եւ այս թեկնածուները կարողացած են մասնակցիլ բոլոր ընտրութիւններուն, ունեցած են ընտրուելու իրաւունք»:

Անոր խօսքով՝ այժմ Թուրքիոյ Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ներքին գործոց նախարարութեան ուղարկած գրաւոր կանոնագրով նոր սահմանափակում կը դրուի պատրիարքական ընտրութիւններուն:

«Այս կանոնագրով կ'ոտնահարուին իրական թեկնածուներու ընտրական իրաւունքները, ինչը երբեք չենք ընդունիր», - ընդգծած է Փայլանը:

Ան նկատել տուած է, որ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանը իրաւունք ունի առարկելու այդ որոշումը, յայտնելով, որ 20 տարի առաջ՝ Մեսրոպ Մովսէսեանի ընտրութեան ընթացքին այդպիսի սահմանափակում նոյնպէս եղած էր, սակայն տուեալ ժամանակաշրջանի նախաձեռնարկ մարմինը առարկած էր որոշումը եւ կարգաւորած իրավիճակը:

«Այժմ նոյն ձեւով պէտք է առարկել: Նախարարութեան պաշտօնեաները պէտք է հանեն այդ սահմանափակումը, հակառակ պարագային սա կարելի չ'է անուանել ընտրութիւն»:

## Պաքուն Հակադարձած է ՄԱԿ-ի Գլխաւոր Վեհաժողովին Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Յայտարարութիւններուն

Պաշտօնական Պաքուն արձագանգած է ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողով 74-րդ նստաշրջանին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւններուն՝ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ:

Ատրպէյջանի նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականութեան հարցերով բաժնի ղեկավար Հիքմէթ Հաճիբեւը, մասնաւորապէս, հակադարձած է Հայաստանի վարչապետի պնդումներուն, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը տարածքային պահանջներու մասին վէճ է: «Հայաստանի ղեկավարութիւնը յայտարարած է, թէ հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյջանի համար ընդունելի ձեւաչափով: Հակամարտութեան կողմերը, սակայն, Հայաստանն ու Ատրպէյջանն են: Ատրպէյջանի Լեռնային Ղարաբաղի շրջանին կայ հայկական եւ ատրպէյջանական համայնք, դարաբաղեան հակամարտութիւնը չունի կարգաւորման այլ մոտեւ, քան՝ Ատրպէյջանի տարածքային ամբողջականութեան շրջափակումներ», - յայտարարած

է Ատրպէյջանի նախագահի աշխատակազմի բարձրաստիճան պաշտօնեան:

Իր ելոյթին մէջ անդրադառնալով դարաբաղեան հիմնախնդրին՝ վարչապետ Փաշինեանը մասնաւորապէս յայտարարած է. - «Ատրպէյջանի կառավարութիւնը Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը ներկայացնում է որպէս Հայաստանի եւ Ատրպէյջանի միջեւ տարածքային վէճ: Մենք բնաւ համաձայն չենք հակամարտութեան այդպիսի մեկնաբանութեան հետ: Դա վէճ չ'է Հայաստանի եւ Ատրպէյջանի միջեւ: Այս վէճը տարածքային պահանջների մասին է: Խօսքը մարդկանց մասին է, տղամարդկանց, կանանց եւ իրենց հայրենիքում ապրելու նրանց իրաւունքի մասին, այնպէս, ինչպէս ապրել են իրենց նախնիները դարերի ընթացքում: Յաւոք, Ատրպէյջանի իշխանութիւնները չեն ցանկանում խօսել այդ մարդկանց հետ եւ բանակցել նրանց հետ, քանի որ նրանք ցանկանում են ունենալ տարածքներ, բայց ոչ ժողովուրդ: Աւելի ճիշդ՝ տարածքներ, առանց ժողովրդի»:

## Լի Սյէն Լունգ ԵԱՏՄ-ի Մէջ Հայաստանը Սինկափուրի Առանցքային Գործընկերն Է



Վարչապետեր Լի Սյէն Լունգ եւ Նիկոլ Փաշինեան համատեղ ասուլիսի ժամանակ

Հոկտեմբեր 1-ին Երեւանի մէջ կայանալիք Եւրասիական տնտեսական միութեան գագաթնաժողովի ընթացքին ԵԱՏՄ եւ Սինկափուրի միջեւ պիտի ստորագրուին համապարփակ տնտեսական համագործակցութեան եւ ազատ առեւտուրի մասին համաձայնագրեր, բացի այդ՝ Հայաստանի եւ Սինկափուրի միջեւ պիտի կնքուի ծառայութիւններու, առեւտուրի եւ ներդրումներու մասին երկկողմ համաձայնագիր:

Այս մասին յայտնի դարձած է Երեւանի մէջ Հայաստանի ու Սինկափուրի վարչապետերու համատեղ ասուլիսի ժամանակ:

Սինկափուրի վարչապետ Լի Սյէն Լունգը, որ աւելի քան 15 տարի արդէն կը ղեկավարէ երկիրը, ժամանած է Հայաստան եւ բանակցութիւններ վարած է Նիկոլ Փաշինեանի հետ:

«Ուրախ ենք, որ այս համաձայնագրերը կնքուելու են ԵԱՏՄ-ում Հայաստանի նախագահութեան ընթացքում: Մենք, որպէս ԵԱՏՄ նախագահող երկիր, զգալի ջանքեր ենք գործադրել ԵԱՏՄ արտաքին կապերի աշխարհագրութիւնն ընդլայնելու ուղղութեամբ եւ Սինկափուրը եղել է մեր ուշադրութեան կեդրոնում: Յոյսով ենք, որ այս կարեւոր իրաւապայմանագրային հենքի ստեղծումը կը նպաստի տեղեկատուական թեխնոլոգիաների եւ նորարարութեան ոլորտներում մեր երկրների համագործակցութեան աշխուժացմանը», - իր խօսքին մէջ, մասնաւորապէս, ըսած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Ի դէպ, ինչպէս իր խօսքին մէջ նշած է Լի Սյէն Լունգը, համաձայ-

նագրերու շուրջ բանակցութիւնները տեւած են երկու տարի եւ անցած են եօթ փուլէ:

Փաշինեանը յիշեցուցած է՝ այս տարի երկու պետութիւններու ներկայացուցիչներու ունեցած հանդիպումները, ինչը, ըստ վարչապետի, գերազանց դաշտ ստեղծած է Հայաստանի ու Սինկափուրի միջեւ յարաբերութիւններու զարգացման համար:

«Մեր երկու երկիրներու միջեւ կապերը ջերմ են եւ սկիզբ կ'առնեն 19-րդ դարէն: Սինկափուրի մէջ կը գործէ փոքր, սակայն կենսունակ հայ համայնք, որ նշանակալից ներդրում ունեցած է մեր հանրութեան մէջ: Մենք ունինք նաեւ հայկական փողոց եւ հայկական եկեղեցի, որ մեր հնագոյն եկեղեցին է, կը ճանդիտանայ մեր ազգային կոթողներէն եւ կը պոստի մեր պահպանութեան ներքոյ: Անգամ մեր ազգային ծաղիկը՝ Vanda Miss Joaquim-ը, ստեղծած է տիկին Ակնես Հոակիմը, որ ծնած էր Սինկափուրի մէջ, սակայն ծագումով հայ էր», - մանրամասնած է Լի Սյէն Լունգը:

Անդրադառնալով Երեւանի մէջ ստորագրուելիք համաձայնագրերուն՝ Սինկափուրի վարչապետը նշած է, որ այն կրնայ ճանապարհ հարթել Եւրասիական տնտեսական միութեան եւ ASEAN-ի՝ Հարաւորեւելեան Ասիոյ երկիրներու միութեան միջեւ համագործակցութեան համար: Սինկափուրը ASEAN-ի երկիրներէն է:

«Եւրասիական տնտեսական միութեան մէջ Հայաստանը Սինկափուրի համախոհն է ու առանցքային գործընկերը», - յայտարարած է Լի Սյէն Լունգը:

## Ութ Երկիրներու Ղեկավարներու Մասնակցութեամբ

Շարունակուած է 1-էն դունելի լուծում գտնել: Նիկոլ Փաշինեանը նշած է նաեւ, որ անհրաժեշտ կը համարեն աշխուժացնել համատեղ ջանքերը՝ ուղղուած ԵԱՏՄ երկիրներու միջեւ ազգային արժույթներով հաշուարկներու անցման համար բարենպաստ պայմաններու ստեղծման:

Նիկոլ Փաշինեանը ըսած է, որ Հայաստանը առանձնապատու կը կարեւորէ Եւրասիական տնտեսական միութեան արտաքին տնտեսական յարաբերութիւններու աշխարհագրութեան ընդլայնումը:

Անոր խօսքով՝ արդէն այս ամիս ուժի մէջ կը մտնեն Իրանի եւ Չինաստանի հետ համաձայնագրերը: Անոնց յետագայ իրականացումը, ըստ անոր, առաջնային է՝ երրորդ երկիրներու հետ առեւտրային համագործակցութեան իրական ընդլայնման ծիրէն ներս:

Նիկոլ Փաշինեանը նաեւ յայտնած է, որ արդէն աւարտած են Սինկափուրի հետ բանակցութիւնները: Ստորագրուած է ԵԱՏՄ-ի, անոր անդամ երկիրներու եւ Սինկափուրի Հանրապետութեան միջեւ Ազատ առեւտուրի մասին համաձայնագիրը:

### Հայաստան-Ռուսաստան Ռազմավարական Կապերը Աշխոյժ Կերպով Կը Ջարգանան



Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարները Երեւանի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը փայլուն գնահատած է Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի հետ հանդիպումը: Այս մասին ՀՀ վարչապետը գրառում կատարած է «Ֆէյսպուք»-ի իր էջին: «Փայլուն գրոյց ունեցանք ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինի հետ: Մեր ռազմավարական յարաբերութիւնները աշխոյժ զարգացում կ'ապրին», - «Արմէնպրես»-ի հաղորդմամբ՝ նշած է Նիկոլ Փաշինեանը:

Հանդիպումը կայացած է Հոկտեմբեր 1-ին Երեւանի մէջ՝ Եւրասիական տնտեսական Բարձրագոյն խորհուրդի նիստին ետք: Նիկոլ Փաշինեանը եւ Վլատիմիր Փութինը ըսած են, որ Բարձրագոյն խորհուրդի նիստին կարեւոր արդիւնքներ արձանագրուած են: «Յարգելի Վլատիմիր Վլատիմիրովիչ, ուրախ եմ Ձեզ ողջունել Հայաստանում եւ քննարկել Ձեզ հետ օրակարգային հարցեր: Մեր նախագահութիւնը ԵԱՏՄ-ում

համարում եմ իսկապէս յաջողած: Համոզուած եմ, որ կ'արձանագրենք նոր արդիւնքներ», - ըսած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինը պատասխանած է. «Մեր յարաբերութիւնները մարտավարութիւնը ամրապնդուած է ոչ միայն վերջին տարիներու, տասնամեակներու ընթացքին, այլեւ մեր ժողովուրդներու բազմադարեայ պատմութեամբ: Կը շնորհաւորեմ ձեզ որպէս ԵԱՏՄ նախագահ Երեւանի մէջ կայացած գաղթնաժողովի արդիւնքներու համար, անոնք լաւ էին ե՞լ մեր ու Յորդ երկիրներու գործընկերներու հետ կապերու զարգացման տեսակէտէ, եւ, ինչպէս Դուք ըսիք, ոչ պակաս կարեւոր էր, թերեւս՝ աւելի կարեւոր, որ ոչ մէկ խոչընդոտ չեղաւ այս միութեան աշխատանքներու կազմակերպման մէջ, ընդհակառակը՝ ձեռք բերուեցան բոլոր համաձայնութիւնները միութեան երկիրներու միջեւ»:

### Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Փաշինեան-Ռուսիանի Հանդիպումը



Նիկոլ Փաշինեան եւ Հասան Ռուսիանի Երեւանի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցած է Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Հասան Ռուսիանիի հետ, որ Հայաստան կը գտնուի ԵԱՏՄ Բարձրագոյն տնտեսական խորհուրդի նիստին մասնակցելու նպատակով: Ողջունելէ ետք Իրանի նախագահը՝ Հայաստանի վարչապետ Փաշինեան նշած է, որ սա Իրանի նախագահի առաջին այցն է Հայաստան՝ մեր երկրին մէջ տեղի ունեցած քաղաքական փոփոխութիւններէն ետք, եւ Հայաստանի մէջ մեծ կարեւորութիւն կու տան հարեւան եւ բարեկամ երկիրներու հետ յարաբերութիւններուն... Հայաս-

տանը բարձր կը գնահատէ Իրանի հաւասարակշռուած դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցով: Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Հասան Ռուսիանին շնորհակալութիւն յայտնած է ջերմ ընդունելութեան համար. «Մենք մեծապէս կարեւոր կը համարենք Հայաստանի հետ բոլոր ոլորտներու մէջ յարաբերութիւններու զարգացումը եւ ընդլայնումը՝ որպէս բարեկամի եւ հարեւանի: Մենք պատրաստ ենք Ձեր կառավարութեան հետ շարունակել աշխատանքները՝ նոր ծրագիրներ մշակելու եւ կեանքի կոչելու նպա-

### Արաբական Աշխարհ Լիբանան Տնտեսական Նոր Տագնապի Սեմին

Իրանի դէմ կիրարկուած պատժամիջոցներու շարքին Միացեալ Նահանգներու կառավարութիւնը չէ անտեսած նաեւ Լիբանանի Հրզպալլահ կուսակալութիւնը: Իրանի հովանաւորութիւնն ու տնտեսական աջակցութիւնը վայելող այս կազմակերպութիւնը եւս թիրախ հանդիսացած է ԱՄՆի նախագահ Թրամփի կողմէ: Արդարեւ, խիստ հակակշիռի տակ առնուած են լիբանանեան այն դրամատուները, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչակից են ու դրամական գործառնութիւններ կ'ունենան Հրզպալլայի հաշուին: Այս կապակցութեամբ շատ խիստ արտայայտութիւն մը ունեցաւ ԱՄՆի արտաքին գործոց նախարարի օգնական Տէյվիտ Շէնքը եւ ըսաւ. «Ամերիկեան վարչակարգը ամէն ինչ պիտի ընէ Հրզպալլային տրամադրուող ամէն տեսակի ֆինանսաւորումի վերջ տալու: Եթէ բացայայտենք որ դրամատուն մը Հրզպալլային ֆինանսաւորում կ'ապահովէ, զայն պատժամիջոցի պիտի ենթարկենք»:

Լիբանանի դրամատուները ներկայիս անազանազան վիճակի մէջ են: Դրամատուն մը իր դռները փակեց, ուրիշներ տազնապալի կացութեան առաջին առնելու մասին կը մտածեն: Քարիւղ ներածողները եւս մտահոգուած են: Վառելիքի մատակարարող լիցքաւորումի կարգ մը կայաններ կարծ ժամանակի մը համար դադարեցան բանելէ, որուն պատճառով ինքնաշարժեր դժուարութիւն ունեցան պէնզին ճարելու: Անցեալ Կիրակի Պէյրութի, Թրիփոլիի, Ջահլէի եւ այլ շրջաններու մէջ բողոքի գանգուածային ցոյցեր տեղի ունեցան, պահանջելով վերջ տալ տնտեսական անկայուն վիճակին: Իր հերթին, Լիբանանի հանրապետութեան նախագահ Միշէլ Աուն ելոյթով մը հանդարտութեան եւ ազգային միասնութեան կոչ ուղղեց եւ ըսաւ. «Լիբանան կը դիմագրաւէ լուրջ մարտահրաւէրներ, որոնցմէ կարելի է դուրս գալ, եթէ համաձայնինք զանոնք դիմագրաւելու շուրջ»:

Նշենք նաեւ որ նախագահ Աուն ելոյթ ունենալով ՄԱԿ-ի ներկայ նստաշրջանին, մասնաւորաբար անդրադարձաւ Լիբանանը յուզող սուրիացի գաղթականներու հարցերու եւ ըսաւ թէ ցարդ 250,000 սուրիացիներ իրենց երկիրը վերադարձած են: Անոնք որեւէ հետապնդումի չեն ենթարկուած: Ուստի մնացեալներու տեղափոխութեան համար եւս իր օժանդակութիւն պէտք է ցուցաբերէ միջազգային ընտանիքը:

### Սեւտական Արաբիոյ Թագաւորի Թիկնապահը Սպանուած

Միջազգային լրատու գործակալութիւնները կը յայտնեն թէ Սէւտական Արաբիոյ Թագաւոր Սըլման Պըն Ապտէլ Ազիզի անձնական թիկնապահ գոր. Ապտէլ Ազիզ Ֆահմ սպաննուած է իր ընկերոջ տան մէջ, որուն տունը գտնուող հիւրերէն մէկուն (Մաստուհ Մէշալ Ալիի) հետ վէճի բռնուած է: Մաստուհ դուրս ելած եւ ապ կրկ բացած է իր ատրճանակով եւ ներկայներէն շատեր վնասուածք ստացած են: Իսկ թիկնապահ Ֆահմ մահացած է հիւանդանոցին մէջ: Ոստիկանութիւնը ղէպքին վայրը հասած է, յանցագործը գինեալ դիմադրութիւն ցոյց տուած պահուն սպաննուած է:

Ջօր. Նահմ եղած է նաեւ հանգուցեալ Ապտալլա Թագաւորին թիկնապահը: Ան կը նկատուի այդ որակի լաւագոյն թիկնապահներէն մին, համաշխարհային մակարդակով:

Թեան վերաբերող հարցեր: Ռուսիան ընդգծած է, որ վարչապետ Փաշինեանի՝ Հայաստանի կառավարութեան ղեկավարումը ստանձնելէն ետք երկու երկիրներու միջեւ առեւտրաշրջանառութեան ծաւալները զգալիօրէն աճած են, իսկ համատեղ ծրագիրները կը շարունակուին յաջողութեամբ: Իրանի նախագահը աւելցուցած է, որ իրենք պատրաստակամ են քննարկելու նաեւ Մեղրիի ջերմակեղտ-րակեղտի կառուցման ծրագիրը կեանքի կոչելու գործընթացը, ընդլայնելու երկկողմ ներդրումներու, ազատ առեւտուրի գոտիներու միջոցով առեւտրաշրջանառութեան ծաւալները: Ջրուցակիցները մտքեր փոխանակած են նաեւ Պարսից ծոցը Սեւ Ծովուն միացնելու տարանցիկ ուղիներուն վերաբերող հարցերու շուրջ: Վարչապետ Փաշինեան շեշտած է, որ այդ ծրագիրը կեանքի կոչելը կը բխի մեր երկրի ռազմավարական շահերէն, եւ Հայաստանը պատրաստ է գործնական քայլեր իրականացնելու այդ նպատակով: Հանդիպման ընթացքին խօսուած է նաեւ դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացին: Հասան Ռուսիանի կարեւոր համարած է հակամարտութեան կարգաւորումը խաղաղ բանակցութիւններու միջոցով՝ հաշուի առնելով հակամարտող բոլոր կողմերու դիրքորոշումներն ու կարծիքները:

տակով, ընդլայնել կազմակերպութեան դիմաց ծրագրի ծաւալները: Միաժամանակ, պատրաստակամ ենք Հայաստանի մէջ կազմի, քամիի եւ արեւի միջոցով ելեկտրականութեան արտադրութեան ծրագիրներու իրականացման: Մենք շահագրգռուած ենք ուժանիւթի ոլորտին մէջ տարածաշրջանային նախագիծերու կեանքի կոչմամբ եւ ենթակառուցուածքներու զարգացմամբ»: Հասան Ռուսիանի խօսքով՝ իրանական կողմը հետաքրքրուած է Հայաստանի հետ համագործակցութեամբ նաեւ փոխադրամիջոցներու ենթակառուցուածքներու ոլորտին մէջ, որոնց շարքին՝ մեր երկրի մէջ տարբեր ճանապարհայինական ծրագիրներու մէջ ներգրաւուելու գործին մէջ: Վարչապետ Փաշինեան ողջունած է իրանական կողմի պատրաստակամութիւնը՝ ընդլայնելու կազմակերպութեան դիմաց ծրագիրը: Հայաստանի վարչապետը եւ Իրանի նախագահը երկու երկիրներու կառավարութիւններու պատասխանատուներուն յանձնարարած են սեղմ ժամկէտներու մէջ մշակել եւ ներկայացնել նշուած ոլորտին մէջ համագործակցութեան ընդլայնման առաջարկներ: Կողմերը անդրադարձած են նաեւ երկաթուղային բնագաւառին, բարձր արհեստագիտութիւններու, մաքսային, գիտութեան, զբօսաշրջութեան ոլորտներու մէջ համագործակցու-

# Խանդավառութիւն եւ Պատասխանատուութիւն

## ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԽԹԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 28-ամեակին առթիւ, վարչապետ Նիկոլ Փաշինեան եկաւ Լոս Անճելըս, խանդավառեց մեզ ու մեկնեցաւ: Հիմա ի՞նչ:

Նախ յստակացնենք, որ եթէ մեր համայնքէն որեւէ մէկը դոյզն կասկած իսկ ունէր Փաշինեանի վայելած համագրային ժողովրդակա- նութեան վրայ, վստահաբար այդ ալ փարատեցաւ, ի տէս այն աննախ- ընթաց ընդունելութեան, որուն ան արժանացաւ: Աննախընթաց, որովհետեւ Հայաստանի որեւէ ներկայացուցիչ ցարդ չէր արժանա- ցած այսքան խանդավառ եւ խուռներամ ընդունելութեան: Այս ժողովրդային ընդունելութիւնը եկաւ անգամի մը համար եւս փաստելու, որ Փաշինեանի յաջողութեան թաւաշէջ Յեղափոխութիւնը նոր յոյս ու եռանդ ներարկեց ոչ միայն Հայաստանի բնակչութեան, այլեւ աշխարհասփիւռ հայութեան, ներառեալ մեր համայնքին: Այս երեւոյթը ինքնին, պէտք է համոզե- բոյրս, որ նախանձախնդիր ըլլանք այս շարժումի յաջողութեան, որովհետեւ վերադարձ նախկին իրավիճակին, պիտի նշանակէր համատարած յուսալքում, ծանրա- կշիռ հետեւանքներով:

Նախանձախնդիր ըլլալ չնշա- նակէր սխալներու ի տես աչք փակել, այլ՝ շինիչ քննադատութիւններով աչալուրջ հսկել, որ շարժումը չշեղի իր նպատակակէտերէն: ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի Օգոստոս 1994-ին Լոս Անճելըս այցելութեան առթիւ մեր բարի գալուստի յօդուածին մէջ կը մէջբերէինք Կէօթէի մէկ արտայայ- տութիւնը՝ «Իշխելը դիւրին է. կառավարելն է դժուար», ու կ'աւելցնէինք. «Օգտուեցէք այս պատմական առիթէն, ի մի համախմբելու մեր ժողովուրդի տաղանդները ու բոլորիս ներդրումով կառավարելու մեր պետութիւնը»: Նոյն յօդուածին մէջ, վեր առնելով 1988-ի շարժման բերած նպաստը մեր մտածողութեան յեղաշրջման մէջ, կը գրէինք, որ այդ շարժումը «եկաւ շեշտելու ազգային ինքնուրոյն մտածողութեան անհրաժեշտ- տութիւնը»: Նիկոլ Փաշինեանը 88-ի շարժման պտուղներէն է եւ խորապէս կ'ըմբռնէ այդ մտածողութե- ան կարեւորութիւնը: Իր իսկ բառերով՝ «Միթէ՞ հասկնալի չէ, որ մարդը կենդանուց տարբերում է նրանով, որ ինքը, այսինքն՝ իւրաքանչիւր անհատ, պէտք է ունենայ իր ինքնուրոյն, անկրկնելի իւրօրինակ ճանապարհն ու ընտրութիւնը»:

Երբ վերլուծական ակնարկ մը կը նետենք մեր ազգի անցած յիսնամեայ ճանապարհին վրայ, կը նշմարենք երեք գլխաւոր շարժում- ներ, որոնք մեծ անդրադարձ ունեցան մեր հաւաքական մտածելակերպի ձեւաւորման եւ զարգացման մէջ:

Առաջինը՝ Եղեռնի յիսնամ- եակին առթիւ 1960-ականներուն ծաւալած շարժումն էր, որ մեզ մղեց սզատման մտածելակերպէն անցնելու պահանջատիրութեան փուլին եւ անոր առթած հետեւանքներուն:

Երկրորդը՝ 1980-ական թուա- կաններուն ծաւալած «Ղարա- բաղեան» շարժումն էր, որ արդիւնաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան անկախացումով եւ Արցախի ազատագրումով:

Դժբախտաբար, օտարի դարաւոր լուծէն մեր մէջ յամեցող հատու- ծական մտածողութիւնը խոչընդոտեց այդ շարժման առողջ զարգացումը: Վերեւ նշուած մեր յօդուածին մէջ կը գրէինք. «Դժուար պիտի ըլլայ ձերբազատուիլ դարերու ընթացքին մեր մէջ տուն շինած այդ հօտային մտայնութիւնէն, սակայն անհրաժեշտ է արմա- տախիլ ընել այդ մէկը, եթէ կ'ուզենք, որ մեր նորահաստատ պետականութիւնը յարատեւէ»:

Երրորդը՝ Թաւաշէյ Յեղա- փոխութիւնն է, որ պէտք է շարունակէ 80-ականներու շարժման կէս մնացած առաքելութիւնը, ուժաւորելով ամէն մէկ անհատ: Նիկոլ Փաշինեանի բառերով՝ «Հայաստանի Հանրա- պետութեան քաղաքացի. Հայաստանի ապագան կախուած է մէկ մարդուց, եւ այդ մէկ մարդը դո՛ւ ես»: Օրին, վազգէն Սարգսեանն ալ յայտարարած էր, որ «Լինում են պահեր, երբ մի քանի մարդուց է կախուած ժողովրդի նակատագիրը»: Դժբախտաբար, Հոկտեմբեր 27-ն ցոյց տուաւ «մի քանի մարդու» մեծութեան կողքին, նաեւ դիւրաբեկութիւնը: Թաւաշէյ Յեղափոխութեան «ինքնուրոյն



մտածողութեան» շարժումը պէտք է ծաւալի ու վերածուի «ամէն մէկ մարդու» անասանութեան:

Ժամանակը պատեհ առիթներ կը ստեղծէ ժողովուրդներու պատմութեան ընթացքին: Հայ ժողովուրդը շատ պատեհ առիթներ բաց թողած է ու այդ պատճառաւ հասած է այս օրուան, որ երբէք չի՛ համապատասխաներ իր ներուժին ու կարողականութեան: Ժամանակն է, որ զգաստանանք եւ ձեռք չտանք Թաւաշէյ Յեղափոխութեամբ ներկայացած այս առիթն ալ:

Խանդավառութիւնը սկզբնա- կէտն է որեւէ ծրագրի մեկնարկին: Ան շուտով կրնայ խամրիլ ու մարիլ, եթէ կարողութիւնը չունիս ներկայ խանդավառ վիճակիդ մէջ պատկերացնելու եւ ապրելու ապագայի տեսիլքդ: Կը խամրի, եթէ անհրաժեշտ գործնական քայլեր չես առներ իրականացնելու այդ ծրագիրդ, տեսիլքդ: Իսկ գործնական քայլեր կ'առնուին միայն, երբ կայ գործը յաջողութեամբ պսակելու պատասխանա- տուութեան գիտակցութիւնը:

Կազմակերպութեամբ ՄԴՀԿ Սապահ Գիլ Մասնաճիւղի  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**  
 Տեղի կ'ունենայ Ծաբաթ, Հոկտեմբեր 5, 2019 երեկոյեան  
 Ժամը 7:30-էն սկսեալ:  
 Մուտքի նուէր՝ \$65  
 Վայր՝ 9537 Shoshone Ave., Northridge, CA 91325  
 Տեղերը ապահովելու համար՝  
 Հեռ. 818-648-6270, 559-313-0147  
 ԾԱԾԱՅՈՒՅԱԿ. Ուրֆաի Քեպապ, Հալի Քեպապ,  
 Աղցաններ, Քաղցրեղէն եւ Սուրճ  
**ARMENIAN NIGHT**  
 Saturday, October 5, 2019 from 7:30 pm  
 MENU: Ourfa Kebab, Chicken Kebab, Appetizers.  
 Dessert & Coffee  
 RSVP: by September 28, 2019  
 Tel: 818-648-6270, 559-313-0147  
 Donation: \$65  
 Wine & soft drinks are included.

### Գիրքի ներկայացում «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին Մէջ»



Ուրբաթ, 20 Սեպտեմբեր 2019-ին, Երեկոցեան ժամը՝ 7.30ին, Փաստինայի Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցւոյ՝ Տէրեան սրահին մէջ, տեղի ունեցաւ Դոկտ. Յովհաննէս Աճմարանեանի «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին Մէջ» Գիրքի ներկայացումը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Եկեղեցւոյ Վարչութեան Ատենապետ՝ Արա Ասիլեան: Ան բարի գալուստի խօսք ուղղեց մշակութասէր եւ գրականասէր հանրութեան եւ անդրադարձաւ Դոկտ. Աճմարանեանի գրական բեղուն վաստակին եւ ներկայացուց ու

Աստուածաշունչին մէջ: Արժանի է չիշել թէ 19-րդ դարէն սկսած գիրքը հարուստ է թարգմանական եւ լեզուական մէջբերումներով ու մասնագիտական աշխատանքով հարստացած է օտար եւ հայ աղբիւրներ օգտագործելով, տալով գիրքին ակադեմական խորք:

Հետաքրքրական է տեսնել թէ գիրքի իւրաքանչիւր բաժնի վեոնագիրը թարգմանուած է Անգլերէնի եւ գիրքի վերջաւորութիւնը ունի Անգլերէն լեզուով ամփոփում մը որ կարծէք հեղինակը ըսել կեւ ուզէ եւ ցոյց կու տայ ոչ Հայերէն



հրաւիրեց Եկեղեցւոյ Հովիւր՝ Վերապատուելի Սերոբ Մկրտիչեանը որ նաեւ գիրքին Յառաջաբանը գրած էր, ներկայացնելու Դոկտ. Յովհաննէս Աճմարանեանի՝ «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին Մէջ» գիրքը:

Վերոյ Ս. Մկրտիչեան, նախ անդրադարձաւ Դոկտ. Աճմարանեանի կենսագրական գիծերուն, նաեւ չիշելով թէ այս գիրքը կը համարուի հեղինակին 30-րդ աշխատասիրութիւնը եւ այս տարի իր գրական վաստակին 50 ամեակը:

Ապա վեր. Մկրտիչեան հետեւեալ հարցումով շարունակեց՝ «Արդեօք Հայը եւ Հայաստանը գոյութիւն ունի՞ Աստուածաշունչին մէջ»: Ան ներկայացուց գիրքին պարունակութեան ցանկը եւ մէջբերումներով անդրադարձաւ Դոկտ. Աճմարանեանի վերլուծումներուն եւ թէ ինչպէս ան յաջողած է փաստել թէ Հայը եւ Հայաստանը էական եւ կարեւոր տեղ ունին

կարդացողին թէ Հայը Աստուածաշունչական ժողովուրդ եղած է եւ պատմութեան ընթացքին միշտ առկայ եղած է Աստուածաշունչին հետ:

Ապա ծափահարութիւններով հրաւիրուեցաւ գիրքի հեղինակ՝ Դոկտ. Յովհաննէս Աճմարանեան, որ փոխանցեց իր շնորհակալական սրտի խօսքը եւ պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

Գրական երեկոն ձուլացաւ երբ ներկաները ունկնդրեցին Մարալ Բարսեղեանի հոգեպարար մեներգները, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ տաղանդաւոր դաշնակահարուհի՝ Եսթեր Ասիլեանի:

Երեկոն իր աւարտին հասաւ Կիլիկիա մաղթերգով եւ Վեր. Յովհաննէս Մելքոնեանի աղօթքով:

Շնորհանդէսէն ետք տեղի ունեցաւ գիրքի մակագրութիւն եւ հիւրասիրութիւն:

Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցի Փաստինա

### Հայաստան Արցախ Ֆոնտը 2019-ի \$62 Միլիոնի Նպաստ Հայթայթած է Հայաստանին ու Արցախին



Մայիսէն Սեպտեմբեր 2019-ի միջեւ, Հայաստան Արցախ Ֆոնտը աննախադէպ՝ \$62 միլիոն արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին:

Սոյն օժանդակութիւնը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնտը իր սեփական ջանքերով \$62 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք եւ այլ մարդասիրական պիտոյքներ ապահոված է Direct Relief կազմակերպութենէն (\$59.5 միլիոն), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութենէն (\$360,000), MAP International կազմակերպութենէն (\$9,000), եւ Row Հիմնարկէն (\$2,500):

Մեծարժէք ապրանքներ նուիրած են նաեւ Project Agape (\$97,000) եւ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (\$282,000):

Այս ժամանակաշրջանին նուիրուած դեղորայքն ու բժշկական պիտոյքները առաքուած են Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան, Արցախի Առողջապահութեան Նախարարութեան, ՀԲԸՄ Քլոտիա Նազարեան Սուրիահայ Գաղթականներու Բժշկական Կեդրոնին՝ Երեւան, Արաբկիր Մանուկներու Միացեալ Հիմնարկին, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, City of Smile Հիմնարկին, Հայաստանի Օգնութեան Ֆոնտին, Մանկաբարձային, Նորածնաբանական, եւ Կնաբանական Կեդրոնին, Մեծն Ներսէս Բարեգործական Կազմակերպութեան, Մուրացան Երեխաներու Ներ-

գատաբանութեան (Endocrinology) Կեդրոնին, Հայաստանի Արիւնաբանական Կեդրոնին, եւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական Կեդրոնին:

2019-ի առաջին ինը ամիսներուն, Հայաստան Արցախ Ֆոնտը \$67 միլիոն արժէքով դեղորայք, բժշկական պիտոյքներ, եւ մարդասիրական այլ օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Անցեալ 30 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են \$892 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն, 158 թուիչքներով եւ 2,447 ծովային արկերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին ձրիաբար եւ կանոնաւորապէս կեւառաջարկուի միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեանը եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն մեծապէս կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը տրամադրել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. Իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

### 2020 Թուականի Հայաստանի Պիւտճէն

Շարունակուած էջ 1-էն

Յաջորդ տարուայ պիւտճէնով՝ 21 տոկոսով կ'աւելնան առողջապահութեան յատկացուող գումարները, կրթութեան ոլորտին տրուող ֆինանսաւորումը կ'աճի 15 տոկոսով, իսկ սոցիալական պաշտպանութեան ոլորտինը՝ 10%-ով:

Ըստ նախագծի, աւելի քան 40%-ով կ'աւելնան երկրաշարժի հետեւանքով անօթեւան դարձած ընտանիքներուն բնակարանով ապահովելու համար յատկացուող գումարները

«Սա պիւտճէ է, որում չկան

որոշակի կոնկրետ շահեր, այսինքն չկան որոշակի ծախսային ծրագրեր, որոնց արդիւնքում որեւէ մի կոնկրետ պաշտօնեայ կամ մի չինովնիկ օգուտներ է քաղելու: Սա այն պիւտճէն է, որում որ արդիւնաւէտութեան բարձրացմամբ պայմանաւորուած պիւտճէ է եւ ակնկալում եմ՝ սա կը լինի նաեւ արդէն ռազմավարական գաղափարների պիւտճէն», - ըսած է Մանուկեան: Կառավարութեան կողմէ հաստատուած այս պիւտճէնով կը նախատեսուի տնտեսական աճ՝ այս տարի 6,3 տոկոս, իսկ 2020-ին 4,9 տոկոս:

Յակոբեան (Պոլսոյ «Մարմարա» օրաթերթի երկարամեայ փոխխմբագիր - Ն.Օ.) ամէնառիթով կը քաջալերէր զիս աշխատութիւնս ամբողջացնելու ուղղութեամբ: Ի վերջոյ իր այս մղումը ոգեւորեց զիս ու ես իմ տարիներու ընթացքիս հասցուցի վերջակէտին: Կը մնար գիրքս սրբագրելու ու խմբագրելու դժուարին պարտականութիւնը, որ արդէն յանձն առած էր իրենի թոյլս: Ուստի, գիրքիս ձեռագիրները քանիցս մաս առ մաս ճամբորդեցին Լոս Անճելըս-Պոլս: Այս երթ ու դարձի շրջանին «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոպէր Հատտէճեան տեղեակ դարձաւ աշխատութեանս եւ դեռ գիրքս իր ձեռագիր վիճակին մէջ, առաջին գնահատողը եղաւ ու նախաբանը գրի առնելով արժէքը աւելցուց գիրքին:

Խ.Ճ. - Ի՞նչ աղբիւրներ օգտուեցաք:

**Գ.Պ.Յ. -** Աշխատութեանս ընթացքին բացառաբար օգտագործեցի Օսմանեան եւ Թուրքիոյ Հանրապետական շրջաններու արխիւները, մասնաւորաբար հայ վարժարաններու յատուկ փաստաթուղթերը:

Խ.Ճ. - Գիրքին հայերէնով հրատարակութիւնը ի՞նչ արձագանգ ստեղծեց:

**Գ.Պ.Յ. -** Կարեւոր հարցում է ասիկա: Պէտք է յայտնեմ որ երբ ես այս աշխատանքը կը կատարէի, մեր բարեկամները հարց տուին թէ գիրքս ի՞նչ լեզուով պիտի հրատարակուէր: Ես առանց տատամսելու՝ «անշուշտ մայրենիով», կը պատասխանէի: Այս պատասխանս քիչ մը յոռետեսութեամբ կը դիմաւորէին եւ կը յորդորէին որ գիրքը թրքերէնով պատրաստեմ, որպէսզի աւելի շահագրգռութիւն ստեղծէ: Մինչդեռ ես կը խորհէի, թէ ինչպէ՞ս կ'ընայի հայկրթական եւ ուսումնական կեանքի պատմութիւն մը գրի առնել այլ լեզուով: Ասիկայի սկզբունքներու հակառակ էր ու կ'ընէի ես ինձի. «Ես այս գիրքը կը պատրաստեմ մերմայրենիով, հոգ չէ թէ մնայ ձեռագիր վիճակի մէջ»: Իմ այս որոշումս ալ շեշտեցի գիրքիս վերջաբանին մէջ:

Խ.Ճ. - Ի՞նչ պայմաններու տակ հրատարակուեցաւ այս հսկայ գիրքը:

**Գ.Պ.Յ. -** Սիրելի քրոջս միջնորդութեամբ գտնուեցաւ գիտակից հայ կին մը, յանձին՝ պոլսահայ Մայրա Մարիսի, որ առանց տատամսելու յանձն առաւ գիրքիս հրատարակութիւնը: Գոհունապետութիւնս անսահման էր: Աւելի ուշ տեղեակ դարձայ, թէ գիրքիս մեկենաս հանդիսացած էին Իսկէնտէր Շահինկէօզի ատենապետութեամբ Պոլսոյ Օրթագիւղ թաղի Ս. Աստուածածին Եկեղեցոյ թաղային խորհուրդը: Այսպիսով տարիներու երազս իրականացաւ:

Խ.Ճ. - Իբրեւ վերջին խօսք ի՞նչ կ'ուզեք ըսել:

**Գ.Պ.Յ. -** Գրքիս առաջին շնորհանդէսը կատարուեցաւ Պոլսոյ մէջ իմ բացակայութեան, «Փարոս» պարբերաթերթի խմբագրապետ Մայրա Մարիսի նախաձեռնութեամբ, Պոլսոյ Յունաստանի Աւագ Հիւպատոսարանի Սիսմանօղլու Մեկարօ սրահին մէջ, բազմազգի հրաւիրեալներու ու համայնքային լայն զանգուածի մը ներկայութեամբ: Երկրորդը՝ մերայս քաղաքի

# «Ձարմացուցիչն Տիեզերաց»

## Ձուարթնոցի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Տաճարը եւ Ներսէս Գ. Տայեցի Շինող Կաթողիկոսը (641-661)



ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ԲԶՆՅԱ. ԱՐՁՈՒԻՄԱՆԵԱՆ

Ճարտարապետ Թորոս Թորամանեան (1864-1934) Շապին Գարահիսար ծնած է ուր եւ տարի մը ետք ծնաւ Զորավար Անդրանիկ: Փարիզի Սորպոնի Համալսարանէն վկայեալ ճարտարապետ Թորամանեան ստեղծագործած է Սոֆիայի, Վառնայի, Պեյճիգայի, Ռուսիայի, Եգիպտոսի, Իտալիոյ, Յունաստանի եւ հուսկ ուրեմն պատմական մեր Վաղարշապատ եւ Անի քաղաքներուն մէջ:

### Բացառիկ Հատորը

Մօտ յիսնամեակ մը առաջ, 1971 թուին, Երեւանի Գիտութիւնների Ակադեմիան բացառիկ եւ վաւերագրական մեծադիր հատոր մը ի լոյս ընծայեց՝ մեր ժամանակակից պատմիչներուն կողմէ հայ հնագրեան եկեղեցիներուն մէջ «Ձարմացուցիչն Տիեզերաց» հռչակուած «Ձուարթնոցը եւ Նոյնատիպ Յուշարձանները» անունով, հեղինակութեամբ Ստեփան Մնացականեանի: Ձուարթնոցի Տաճարը, Դուրինի մօտիկ, արդէն հազարամեակ մը վերաւոր եւ խոնարհած, այսօր կը վկայուի իր անշնջելի բեկորներով: Ան ճարտարապետական գեանի վրայ «վերականգնեցաւ» 1905 թուին յայտնի ճարտարապետ Թորոս Թորամանեանի նախագիծով, չաւերժացնելով ինչպէս Տաճարի բեկորները, սիւներն ու խոյակները, նոյնպէս Թորամանեանի անունը Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան մէջ որպէս անկորնչելի արժէքներ:

Հատորը կը բովանդակէ երկսիւնակ 260 էջ ուսումնասիրութիւն, յաւելեալ 40 էջերու վրայ 100-է աւելի Ձուարթնոցի ԲՈՂՈՐ բեկորներուն լուսանկարներով: Մնացականեան ճարտարապետ Թորոս Թորամանեանի մասին գրած է իր գնահատական խօսքերը, թէ «բարեբախտաբար 1904 թուականին իջմիածին է գալիս ճարտարապետ Թորոս Թորամանեան եւ մասնակցելով պեղումներին կարողանում է անհետացումից փրկել մի շարք բեկորներ»: Հատորի վերջաւորութեան գտնուող բոլոր լուսանկարները ուսանելի չափոր- դականութեամբ, յատակագիծն ու փլատակ սիւները, հոյակապ արձիւններու թեւատարած խոյակները որպէս մնայուն վկայներ ահա կը խօսին 1360 տարիներէ ի վեր:

Երբ առիթով մը հարցուցի երջանկալիշատակ Տ.Տ. Վազգէն Ա Հայրապետին թէ արդեօք Թորամանեանի վերականգնած նախագիծին համաձայն կարելի պիտի ըլլա՞ր օր մը վերակառուցանել Ձուարթնոցի Տաճարը, Հայրապետին պատասխանը եղաւ «Ձուարթնոցը իր բեկորներով եւ տեղադրուած իսկական վայրով կը մնայ անփոխարինելի եւ հարգատար, նոյնիսկ առանց վերակառուցուելու»:

### Պատմական Ակնարկ

Միջնադարեան հայ պատմիչներ ո՛չ մէկ յուշարձան աւելի հիացումով չեն յիշատակած որքան Ձուարթնոցի Տաճարը զոր կոչած են Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, երբ տաճարը կանգուն էր մինչեւ 10-րդ դարու առաջին քառորդը: Սեբէոս Բագրատունեաց Եպիսկոպոս 7-րդ դարու մեր յայտնի պատմիչը «բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեօք՝ արժանի աստուածային պատուոյն» որակած է զայն: Հետաքրքրական է գիտնալ որ միայն Սեբէոսն է որ Տաճարին Ձուարթնոց անունը կուտայ, մինչդեռ բոլոր միւսները Վաղարշապատի Ս. Գրիգոր Եկեղեցի կոչած են զայն: Երեք ակնատես պատմիչներ, Մովսէս Կաղանկատուացի, Յովհաննէս Դրասխանակերտցի, եւ Ստեփաննոս Ասողիկ «մեծ եւ հրաշալի բազմապայծառ յարկ», «բազմապայծառ եկեղեցի», եւ կամ «բազմապայծառ եկեղեցին զանազան յօրինուածովք» կը կոչեն զայն:

Միւրթար Այրիվանցի պատմիչ կը գերազանցէ բոլորը Ձուարթնոցը կոչելով «զարմացուցիչն տիեզերաց», վկայակոչելով 7-րդ դարուն Ներսէս Տայեցի Շինող Կաթողիկոսի (641-661) ձեռամբ շինուած ըլլալը: Կաթողիկոսին ժամանակակից նոյն Սեբէոս պատմիչը աւելի հաստատ կերպով կը գրէ իր «Պատմութիւն ի Հերակլն» շատ կարեւոր գիրքին մէջ ըսելով որ Վաղարշապատի մօտ Ներսէս Կաթողիկոս շինեց զայն «ի վերայ ճանապարհին յորում ասեն ընդ առաջ եղեւ թագաւորն Տրդատ Սրբոյն Գրիգորի»: Ձուարթնոցը 1000 թուականին արդէն քանդուած էր, քանի որ Յովհաննէս Դրասխանակերտցի երբ իր գրած «Պատմութիւն»ը աւարտած է 924 թուին Ձուարթնոցը տակաւին կանգուն էր:


### Մնացականեանի Գճահատումը

Գիտական հիմունքով իր գրած գիրքին մէջ Ս. Մնացականեան Տաճարը կ'որակէ «մի մոնումենտ որը սերունդներին պէտք է հասցնէր հայ հանճարեղ ճարտարապետի վերասլաց գործը նրա համարձակ մտալոյցով մտնելի հոյակերտ մանրամասնութիւններով»: Մինչեւ Թորամանեանի վաղարշապատ հասնիլը պեղումներուն վրայ կը հսկէր խաչիկ վարդապետ Դադեան, որուն օրով արձանագրութիւն մը գտնուած է «ՆԵՐՍԻՍԻՆ Է ՇԻՆԱԾ ՅԻՇԵՑԻՔ» բառերով: Սիւներէն մէկուն վրայ եւս՝ «ՆԵՐՍԷՍԻ» եւ «ԿԱԹՈՂԻԿՈՍԻ» բառերը քանդակուած են որոնք անտարակոյս կը ներկայացնեն օրուան Ներսէս Գ Տայեցի Կաթողիկոսը:

Մասնաւորապէս ուշագրաւ է կ'ըսէ Թորամանեան տաճարի բեկորներուն մէջ պատկերաքանդակ մը որուն գլխի վեղարը ցոյց կուտայ թէ եկեղեցական մըն է Ձուարթնոցի հանճարեղ ճարտար-

րապետը, մէկ ձեռքին բահ եւ միւսին բրիչ, որուն շուրջը գրուած է 80ՀԱՆՆԱ անունը: Թորամանեան կը հիանայ Ձուարթնոցի ճարտարապետին հանճարին եւ բազմակողմանի հմտութեան վրայ, որուն «գեղարուեստական ճաշակի մասին կը վկայեն նուրբ եւ գեղեցիկ քանդակները»: Եւ ի վերջոյ «այնպիսի վայելուչ կերպով խորշերն ու խոյակները իրենց տեղը գտած են որ այլեւս ճարտարապետի հանճարին ու հմտութեան վրայ զարմանալէ զատ մեզի ոչինչ չի մնար ընել»:

### Ներսէս Գ Շինող Կաթողիկոս (641-661)



Հայաստանի տագնապալից շրջանի Կաթողիկոսը եղաւ Ներսէս Տայեցի, մէկ կողմէն Արաբներու արշաւանքը դէպի Հայաստան 640-ական թուականներուն, եւ միւս կողմէն Բիւզանդիոսի կայսեր ճնշումը Հայ Եկեղեցւոյ՝ դաւանական գեանի վրայ: Վտանգը այն աստիճանի հասաւ որ Կաթողիկոսը ստիպուեցաւ դէմ յանդիման գալու Կոստանդ Բ Կայսեր հետ, որ 653 թուին բռնի Դուրին գալով իր ներկայութեանը Հայ Եկեղեցւոյ մէջ Կաթողիկոսին ընդունել կը պարտադրէր 451 թուի Քաղկեդոնի Ժողովին դաւանանքը՝ գոնէ առժամապէս: Կայսեր մոտք գործած եկեղեցին Ձուարթնոցը չէր, այլ Դուրինի Հայրապետանոցի եկեղեցին, քանի որ Ձուարթնոց տակաւին կառուցման մէջ էր եւ աւարտած 659 թուին:

### Բռնի Խեղադիւրում

Յիշեալ կայսերական կողմիտ միջամտութեան ներկայ էր Բագրատունեաց եպիսկոպոս Սեբէոս պատմիչ, որուն հաւաստի տեղեկութեանց համաձայն Կաթողիկոսն ու իր հետեւորդ հայ եպիսկոպոսները, «բացի մէկէն», յոյն քահանային կողմէ Հայ Եկեղեցւոյ մէջ կատարուած յունադաւան պատարագին ներկայ ըլլալով հաղորդուեցան կայսեր ներկայութեան, եւ իբր թէ յունադաւանութիւնը ընդունեցին: Թէ ո՛վ էր չհաղորդուող անձանօթ եպիսկոպոսը, Մաղաքիա Պատրիարք Օրմանեան կ'ըսէ թէ անպայման ինք Սեբէոսն ըլլալու էր որ, առանցանունը տրուելու չափորդ օր յանդիմանուեցաւ կայսերն եւ Կաթողիկոսին կողմէ իր ըմբոստութեանը համար, եւ սակայն չզիչեցաւ յայտնելու անոնց Ս. Գրիգոր Լուսաւորիչէն կտակուած հայոց հաւանքը որուն ինք հաւատարիմ կը մնար:

Խեղադիւրեալ եւ անկանոն տեղեկութիւններով Յոյներ ուզեցին Ձուարթնոց Տաճարը քաղկե-


դոնական եկեղեցի անուանել, նոյնիսկ հայոց Թէոդորոս Ռշտունի իշխանի քաղաքական հակումներու լոյսին տակ՝ հանդէպ Բիւզանդիոնի: Թէոդորոս Ռշտունիի հոգը պիտի չըլլար այդ: Սակայն մեր պատմիչներու շարքը անընդհատ երբ հիասքանչ վկայութիւններով կը խօսին Ձուարթնոցի մասին, այլեւս միւսները աննշան կը մնան: Այս բոլորին վրայ Ներսէս Կաթողիկոս Կոստանդ Բ Կայսեր հրահանգով եւ Ռշտունիի դրդումով հարկադրուեցաւ վեց տարիներ հեռանալ Հայաստանէն ու բնակիլ Տայքի իշխան իր ծննդավայրը, ապահով դարձնելով Ձուարթնոց Տաճարի շինութեան աւարտը զայն վստահելով իր Տեղապահին՝ Անաստաս Ակոռեցի եպիսկոպոսին:

### Վերադարձ Դուրին Հայրապետանոց

Ներսէս Կաթողիկոս Դուրին վերադարձաւ եւ վարեց իր կաթողիկոսութեան մնացեալ տարիները մինչեւ 661: Իր վախճանումէն ետք իր փոխանորդ Տեղապահ Անաստաս Ակոռեցին դարձաւ Հայոց Կաթողիկոս: Ներսէսի Հայաստանէն առժամէպ հեռանալը կը վկայեն ժամանակակից պատմիչները: Յովհաննէս Դրասխանակերտցի Կաթողիկոս պատմիչը կը վկայէ թէ «Սա (Անաստաս) սենեկապետ լեալ մեծին Ներսէսի, վերակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն գտանէր հրամանաւ Ներսէսի մինչեւ էր նա (Ներսէս) ի հալածանա ի գաւառին Տայոց»:

Իսկ 7-րդ դարու Սեբէոս եպիսկոպոս պատմիչը կ'աւելցնէ թէ երբ Ներսէս Կաթողիկոս Դուրին վերադարձաւ, Տաճարին շինարարութիւնը իր ձեռքով աւարտեց ըսելով «յետ վեցերորդ ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր, եւ հաստատեցաւ յԱթոռ Կաթողիկոսութեան: Փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն զոր շինեաց ի վերայ պողոտայն վաղարշապատ քաղաքի»: Վերադաւանալէն երկու տարի ետք Հայրապետը կը վախճանէր 661 թուին, եւ Յովհաննէս Կաթողիկոսի հաստատ խօսքերով «եղաւ մարմինն ի հանգստարանի անդ զոր իւրովի իսկ յօրինեալ էր, ի հիւսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին»:

### ճարտարապետ Թորոս Թորամանեան



Անկասկած Թորոս Թորամանեանի գլուխ գործոցն է Վաղարշապատի Սուրբ Ձուարթնոց Եկեղեցւոյ աւերակներուն միակ եւ վերջ-

### Տրոյ Յարկին Հիւրընկալ Գրադարանը



#### ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Քիչ կը պատահի, որ օտարացնող եւ մաշեցնող սփիւռքեան իրականութեան մէջ, հայ գիրքը, երգը, երաժշտութիւնը, մայր Հայաստանը, անկախ Կիլիկիան, Կոմիտասն ու Սայաթ Նովան, միաձուլուած՝ տեսլապաշտ հայու նուիրումին հետ, կը հանդիպին նոյն վայրին մէջ, վերստին կը ծանօթանան իրարու, կը գրուցեն իրարու հետ եւ կը հրաւիրեն բոլորը՝ երաժշտասէր, ընթերցասէր եւ պրպտող՝ գալու եւ միանալու մշակութային խնճոքի մը, ուր թուղթն ու տառը կ'երգեն ու կը պարեն նմուշներ հայ մտքի գոհարներէն:

Այս մտածումները պաշարեցին միտքս ու հոգիս, երբ վերջերս առիթը ընծայուեցաւ ինծի այցելուելու մը տալու Լիբանանահայ եւ ընհանրապէս հայ իրականութեան մէջ եգալիտ անուն ու հասցէ դարձած հայ երգի եւ երաժշտութեան նուիրուած մասնագիտական ԳՐԱԴԱՐԱՆԸ:

Վերջին քանի մը ամիսներուն, մասնաւորաբար սփիւռքի այլ գաղութներէն ժամանած բարեկամներ հարց կու տային ինծի, թէ ո՞ւր կը գտնուի ԳՐԱԴԱՐ մասնագիտական գրադարանը: Պատահեցաւ նաեւ, որ Հայկապէն եկած հիւր մը խնդրէր ինձմէ որ գինք հասցնեմ երկաթէ կամուրջին կից գտնուող շէնքին ճրգ յարկը: Հասցուցի, բայց ես չբարձրացայ:

Այս պատահարը վրդովեց հոգիս: Ինչպէս կ'ըլլար որ այլ երկիրներէ Լիբանան ժամանած մարդիկ անխուսափելի կը նկատէին իրենց այցելուելու ԳՐԱԴԱՐ, մինչ ես, թէեւ հայ մշակոյթի երկրպագու, տակաւին ծանօթ չէի ճրգ յարկին վրայ գտնուող ԳՐԱԴԱՐԱՆԻՆ:

Դժուար չէր իմանալ, որ միջազգային հռչակի տիրացած ԳՐԱԴԱՐ Համոյթն ու ԳՐԱԴԱՐ գրադարանը հարազատ գաւակներն են երաժշտասէր խաչատուրեան ընտանիքին:

Ժամադրութեամբ մը հասայ Հաճըն թաղամասին մօտ, վերջերս աղէտեալ երկաթէ կամուրջին կից շէնքին ճրգ յարկը:

Արդիական ու փայլատակող յարկաբաժին մը՝ ընդարձակ սրահով ու քանի մը սենեակով:

Սիրալիբ ընդունելութիւն եւ հետաքրքրական գրոյց:

Զրուցակիցներս հաւանաբար զգացին որ թէեւ կը մասնակցիմ խօսակցութեան, բայց փստահաբար նաեւ նկատեցին՝ ներողամտաբար, որ աչքերս ու կեդրոնացումս մէկ մասը ուղղուած է այլ տեղ,

դէպի խոպան պատերը հայ գիրքերով հարստացուցած դարանները: Պարզապէս գեղեցիկ է այս գանձարանը, կը մտածէի, երբ մտքիս թելը հաճոյքով կտրեց գրուցակիցս՝ բացատրելով. «ԳՐԱԴԱՐ գրադարանը ներկայիս ունի մօտաւորապէս 2.300 հայկական երգարան եւ անոնք կը գրաւեն մեր շուրջի պատերը»:

Կ'ելլենք ոտքի եւ կը սկսի մեր բացատրական պտոյտը մշակութային այս գանձարանի բաժանմունքներուն մէջ:

Անձնապէս Կոմիտասի երկրպարգու, պահ մը կը կենամ հայ երաժշտութեան մշտնջեն նուիրուած առանձին բաժնին առջեւ: Կը դիտեմ գիրքերը՝ մաղթելով որ անոնց էջերը գրաւած երգերն ու խաղերը մարմին կ'առնեն շուտով եւ վարդապետին ծննդեան 150ամեակին առիթով՝ հայկական խօսք ու մեղեդի դարձած կը թափանցեն այլասերութեան հողմին յանձուած հայ հոգիներէն ներս:

Քիչ անդին կը հանդիպինք հայերէնէ-հայերէն եւ հայերէնէ այլ լեզուներով աւելի քան 500 բառարաններու: Բառարաններու բաժնին կից տեղադրուած են աւելի քան 3.500 LPs, Cassettes, CDs եւ DVDs -ներ:

Պետական ծաւալով աշխատանքի մը սկիզբն ենք արդեօք, կը մտածեմ՝ միաժամանակ պեղելով կահաւորման գեղեցկութիւնը, որ հայ մշակոյթի մասին ուսումնասիրական տքնաջան աշխատանքը դիւրաւ կրնայ վերածել անյագ հաճոյքի:

Կ'անցնինք քովի սենեակը, ուր կը հանդիպինք հայոց պատմութեան յուշամատեններու, հայկական մանրանկարչութեան եւ ձեռարուեստի նուիրուած հատորներու եւ Յեղասպանութեան վերաբերող վկայագրական գիրքերու:

Կարելի չէ կանգ չառնել Կիլիկիոյ պատմագրական գիրքերու բաժնին առջեւ: Ես ալ կիլիկեցի մը, ինչպէս սփիւռքահայերուն մեծամասնութիւնը, կը տարուիմ մեր թագաւորական անցեալով: Կը սկսիմ մտքով մըմուտք երգը՝ «ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա, աշխարհ, որ ինձ ետուր արեւ», մինչ գրուցակիցիս աչքերը կը փայլատակէին կիլիկեցի ըլլալու եւ Կիլիկիան վերստին նուաճելու անխառն հպարտութեամբ:

Եւ վերջապէս կ'անցնինք դաշնամուրով օժտուած գեղեցիկ սենեակ մը՝ զարդարուած ԳՐԱԴԱՐ Համոյթի ելոյթներէն քաղուած

### 270 Ամեակ - (1749-2019) Զմնառ՝ «Ծննդավայր Իմ Հոգւոյս»



#### ՀԱՅՐ ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԼՈՒԻՍԵԱՆ ԺՈՂՈՐՎՈՐԱԿԵՆ՝ ՔԵՍԱՅԻՒ Ս. ՄԻՔԱՅԻԼ ԵԿԵՂԵՑՈՅ

Ժ. Դարու առաջին կէսին Աբրահամ Պետրոս Ա. Արծիւեան Կաթողիկոս-Պատրիարք, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, Հայրապետը կանգնեցաւ հորիզոնին վերեւ, իբրեւ լուսաճաճանչ կոթող, եւ ժամանակի հոլովոյթին, բազմաթիւ հայ սերունդներ եկան ջերմ եռանդով հաղորդուելու իր լոյսով ու հուրով: Արծիւեան հայրապետը զարգացրի յարատեւ ներշնչարան, հայ մտքի եւ սրտի լուսատու փարոս, անմահ ջահ մը՝ ճշմարտութեան եւ սիրոյ ու անոր ամուր հաւատքին շինարար ու ստեղծագործ ոգիին գեղեցիկ խորհրդանիշը դարձաւ Զմնառու՝ «Վերափոխման Ս. Աստուածածնի» Մայրավանքը:

Երկու հարիւր եօթանասուն տարիներու ընթացքին Զմնառու խաղաղ ու անդորր մենաստանին մէջ, ծովահայաց բարձունքին վրայ, որուն ստորոտը կու գան փշրելու միջեկրականի ալիքները, Ս. Աստուածածնի մայրական հովանիի ներքեւ, սնած եւ ուրճացած են ճշմարիտ առաքեալներու հոյլեր, որոնք հնազանդութեան եւ ողջախոսութեան ուխտերով, եւ աղքատութեան երդումով գօտեպնդուած, մեծապէս արդիւնաւոր եղած են յաջս Աստուծոյ եւ հայ եկեղեցոյ:

#### ԶՄՍԱՌՈՒ ՎԱՍՔԸ

Կ'արժէ տեսնել ժայրի վրայ վիմացած ամրակուռ վերափոխման Ս. Աստուածածնի եկեղեցին, Մասիսանման գոյգ գմբէթներով, որոնք կը խօսին հայ դարերէն, հայ հոգիի ու մտքի ստեղծագործ ճգնաթիւնէն, վերջին շրջաններու հայ ժողովուրդի ազատութեան կամքին կենք տուած եւ վանքին մէջ ապաստան գտած Զաւարեան ֆէտայիներու եւ հերոսներու սիրատեւման եւ ազատութեան վկայ՝ վանքին քարերուն վրայ տասըն եւ հինգ կուսակրօն նահատակ միաբաններու բացուած վերքեր կան այնտեղ, ինչպէս Յիսուսի խաչափայտին վրայ միտուած բեւերներ:

Սրբացեալ քաղաքի, տաճարացեալ Երուսաղէմի նուիրականութեամբ օժուկ վանքիս «Նահատակաց Սենեակ»ին մէջ, նահատակներուն դիմաց ամէն հայրողի կը ջանայ տաճարանալ, նոյնանալ այդ տաճարացեալ միաբան հայրերուն նահատակութեան խորհուրդին հետ:

Երկու հարիւր եօթանասուն տարիներու ընթացքին հազարաւոր հայորդիներ ուխտի եկած են ցաւակին Զմնառու Տիրամօր, որոնց ուխտի աղերսահայաց նախապատմութիւնը աչքերը սեւերած են խորանի Աստուածածնի: Ոմանց աչքերուն մէջ արտասուքը փայլ էր դարձած: Ինչ ցաւերու ամոքման ու դարմանի սպասումներ լարուած էին արցունքի շիթերուն մէջ:

Այստեղ, պատմականօրէն այնքան հարուստ ու պերճախօս, Լիբանանի այս լեռնային բարձունքներուն վրայ, հնադարեան այս վանքին մէջ վառեցաւ քրիստոնէական հաւատքի լոյսը Հայ ժողովուրդի հոգիին մէջ, ինչպէս առաւօտուն կը ծագի մարդուն աչքերուն մէջ.....:

Դարեր շարունակ, մեր միաբան հայրերը Ս. Նարեկի նման աղօթեցին այս վանքի գմբէթներուն տակ, իրենց հաւատքի ապրումներով նուիրագործեցին զայն միշտ լեցուելով Զմնառու Տիրամօր պատկերէն բխող լոյս ճառագայթներով: Երեւակայեցէք դարերու վրայ տարածուած երկարաձիգ ու խտացեալ շարքերը մեր միաբան նախահայրերուն, որոնք Հայաստանի հեռաւոր ու մօտաւոր գիւղերէն ու քաղաքներէն, գաւառներէն եւ նահանգներէ եկան եւ իրենց սիրտերը ընծայ դրին այս վանքին մէջ:

Ես այնպէս կը զգամ, որ կարելի չէ գրիչովս գովքը հիւսել այս վանքին. Այստեղ քարերը խօսք ունին ու լեզու, եւ այնպէս խորունկ ու սրտառուչ պատգամներով կը բարբառին, որ մարդկային որեւէ բառ ու խօսք կը նսեմանան անոնց հօր եւ հոգեյոյզ խօսքին առջեւ:

Այս վանքը դարերու հայ հաւատքի խտացեալ լեզուն է: Կրնան լսել ու ունկրնդիլ աղօթաձայն վանքի քարերու լեզուին, պէտք է միայն խոնարհիլ, երկրպագել այս տաճարին մէջ, լսել, փակուիլ աշխարհին, կարենալ լսելու համար վեհացնող ու գօտեպնդող ձայնը հոգիացեալ այս քարերուն, աղօթաճաճանչ այս կամարներուն, որոնք կը պատմեն մեզի անպատմելի փառքը մեր միաբան հայրերուն եւ հայրապետներուն:

Վանքին գմբէթաբլ կաթողիկէին կամարներուն տակ տակաւին մինչեւ այսօր կը շարունակուին հոգեպարար աղօթքներու մըմունջները, հոգեշունչ շարականներու ալիք, այլք տարածուող հոգեւոր երգերը եւ անուշահոտ խունկերու



### Հայոց ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ եւ Յոհաննես Լեփսիուսի Տուն-Արխիւ. Կնքուեց Համագործակցութեան Հնգամեայ Պայմանագիր



Սեպտեմբերի 26-ին «Հայոց ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ» հիմնադրամի գիտաժողովների սրահում տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի եւ Յոհաննես Լեփսիուսի տուն-արխիւի (Լեփսիուսհաուս - Lepsiushaus Potsdam) միջեւ գործող համագործակցութեան պայմանագրի վերականգման արարողութիւն:

Պայմանագիրը ստորագրեցին Լեփսիուսի տուն-արխիւի գիտական տնօրէն դր. Ռոլֆ Հոսֆելդը եւ Հայոց ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի տնօրէն դր. Յարութիւն Մարութեանը:

Միջոցառման սկզբին ՀՅԹԻ տնօրէն Յարութիւն Մարութեանը ողջոյնի խօսք ասեց ներկաներին, ապա պարոն Ռ. Հոսֆելդը ներկայացրեց Լեփսիուսի տուն-արխիւի գործունէութիւնը, ՀՅԹԻ հետ կնքած պայմանագրի կարեւորութիւնը ու դրա հեռանկարները:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցաւ Լեփսիուսի տուն-արխիւում եղած համիդեան շրջանի (1895-1897 թթ.) հայկական կոտորածներին վերաբերող բացառիկ նշանակութիւն ունեցող թուայնացուած արխիւային նիւթերի յանձնում Հայոց ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին:

Արխիւային նիւթերի թուայնացումն իրականացուել է Գերմանիայում Աւետարանական եկեղեցու կրթաթոշակի (EKD) շրջանակներում Լեփսիուսի տուն-արխիւում հետազոտութիւններ անցկացնող, ՀՅԹԻ «Ցեղասպանագիտական հանդէս» գիտական պարբերականի խմբագրական կազմի անդամ, պ.գ.թ. Հայկ Մարտիրոսեանի կողմից, որը եւ համառօտ տեսաշարի միջոցով ներկայացրեց այդ նիւթերի գիտական ու պատմական նշանակութիւնը, դրանցից օգտուելու ձեւը:

Պայմանագիրը ենթադրում է մի շարք համագործակցութիւններ՝ Լեփսիուսի տուն-արխիւը եւ ՀՅԹԻ-ն պարտաւորում են փոխադարձաբար օժանդակել միմիանց՝ հայ ժողովրդի պատմութեանն ու մշակութիւնը, դոկտոր Յոհաննես Լեփսիուսի կեանքին ու գործին ու, մասնաւորապէս, հայ ժողովրդի գանգոտածային կոտորածների ու ցեղասպանութեան ընթացքում նրա գործունէութեանն նուիրուած մշտական ու ժամանակաւոր ցուցահանդէսների կազմակերպման եւ ամբողջացման հարցում, ինչպէս նաեւ՝ Հայոց ցեղասպանութեան, հայ ժողովրդի փրկութեան ու վերածննդի, հայ-գերմանական յարաբերութիւնների եւ համատեղ հետաքրքրութիւն ներկայացնող արդիական հնչեղութիւն ունեցող պլոթներով, ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Գերմանիայում:

Կողմերը պարտաւորում են նաեւ փոխադարձաբար օժանդակել միմիանց վերոյիշեալ թեմաներով տարրող հետազոտական աշխատանքների ասպարէզում՝ փոխանակելով իրենց հրատարակութիւնները, նախապատրաստելով համատեղ հրատարակումներ, ինչպէս նաեւ կազմակերպելով հայ եւ գերմանացի գիտաշխատողների (յատկապէս երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին) փոխանակումը՝ գործողութիւնների ընթացքում ապահովելով նրանց մասնագիտական դեկավարութեամբ ինչպէս Պոտսդամում, այնպէս էլ Երեւանում:

ՀՅԹԻ տնօրէն պարոն Մարութեանը պարոն Ռոլֆ Հոսֆելդին նուիրեց ամերիկեան մամուլում հրատարակուած Հայոց ցեղասպանութեան մասին յօդուածների հատորներ:

### Օթթաուայի Մէջ, Հայկական Նոր Եկեղեցու եւ Համայնքային Կեդրոնի Դրօշի Բարձրացման Արարողութիւն



22 Սեպտեմբեր 2019, Գանատահայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տէր Աբգար եպս. Յովակիմեանը նախագահեց Օթթաուայի Սուրբ Մեսրոպ Հայց. Առաք. եկեղեցույ՝ նոր եկեղեցի եւ համայնքային կեդրոնի դրօշի բարձրացման արարողութիւնը:

Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Ազնուագարմ Տիկին Անահիտ Յարութիւնեանը, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոսս՝ Պարոն Արա Մկրտչեանը, Ծխական Խորհուրդի անդամները, գլխաւոր բարերարներ՝ Մեծարգոյ Տէր եւ Տիկին Կարօ եւ Անի Տօնոյեանները ու Ազնուափայլ Տիկին Էլիզապէթ Աճելեանը եւ Օթթաուայի Հայ համայնքի բազմաթիւ ներկայացուցիչները հաւաքուել էին նշելու Մայրաքաղաքի, Հայ համայնքի կեանքին մէջ այս կարեւոր հանգրուանը:

Ըստ Հայ եկեղեցույ սուրբ աւանդութիւններուն՝ Գերշ. Սրբազան Հայրը օրհնեց հացը, ջուրը եւ աղը: Այս երեք հիմնական տարրերը մարդու կեանքի մէջ անհրաժեշտ ու կենսական նշանակութիւն ունին: Հացը, ջուրը եւ աղը Աստուծոյ անսահման բարութեան եւ խնամքի խորհրդանշաններն են: Այս վսեմ շնորհներն օրհնութեամբ՝ կը փոխանցուի Արարիչը ծառայելու անմահական հոգեւոր լիցքը:

Ազնուագարմ դեսպան Յարութիւնեանը ողջունեց Օթթաուայի Հայ համայնքի մէջ այս նշանակալի զարգացումը եւ կարեւորեց՝ որպէս համայնք, հաւաքուելու եւ հայ մշակութիւնը, լեզուն եւ ինքնութիւնը զարգացնելու վայր մը ունենալու հարկաւորութիւնը:

Կեդրոնին նուիրուած գանատական ու հայկական դրօշները՝ Գերշ. Տէր Աբգար եպս. Յովակիմեանի եւ Ազնուագարմ դեսպան Տիկին Անահիտ Յարութիւնեանի կողմէն էին: Համայնքի անունով, Ծխական Խորհուրդի ատենապետ Պարոն Յակոբ Տօքմաճեանը դրօշները ստացաւ ու դէպի կայմերու գագաթը բարձրացուց:

Ծուխի Գանձապահ Պարոն Ժան-Ֆիլիպ Թաշճեանը մանրամասն ներկայացուց Օթթաուայի Սուրբ Մեսրոպ Հայց. Առաք. եկեղեցույ վերջին 40 տարուայ տքնաշան աշխատանքներուն մասին, որոնք կատարուեցան ի նպաստ եկեղեցիի ու համայնքային կեդրոնի մը սեփական տարածք ունենալու, ու վերջապէս արժանացան դափնու պսակին ու Օթթաուայի 5065 Thunder Road հասցէով կալուածք եղաւ Աստուածահաճոյ գործունէութեան արգասիքը:

Օթթաուայի Արարատ Հայկական դպրոցի աշակերտները, հայկական երաժշտական հարուստ երգացանկէն, հիանալի երեք կատարումներ ներկայացուցին, ապա տեղի ունեցաւ Ծխական Խորհուրդի կողմէն կազմակերպուած բացօթեայ խնճոյք մը:


Մօտ ապագային, Ծխական Խորհուրդը պիտի սկսի շէնքի վերանորոգման աշխատանքները, որպէսզի այն համապատասխանէ համայնքի կարիքներուն:

14 Յունիս 2019-ին, Օթթաուայի Սուրբ Մեսրոպ Հայց. Առաք. եկեղեցույ Ծխական Խորհուրդի փակ յայտի միջոցով, Օթթաուայի քաղաքապետարանի կողմէն ընդունուեցաւ՝ 5065 Thunder Road հասցէով, 6 հեկտար տարածութեամբ հողի եւ նախկին Carlsbad Springs հասարակական կեդրոնի գնման առաջարկը:

11 Յունիս 2019-ին, Օթթաուայի քաղաքապետարանը հաստատեց կալուածի վաճառքը:

18 Օգոստոս 2019-ին, յաւարտ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնի աւիթով մատուցուած Սուրբ եւ անմահ Պատարագին, Օթթաուայի Սուրբ Մեսրոպ Հայց. Առաք. եկեղեցույ արտակարգ Անդամական Ժողովի արդիւնքով, հաստատուեցաւ Օթթաուայի մէջ 5065 Thunder Road հասցէով կալուածք գնելու մասին որոշումը:

29 Օգոստոս 2019-ին, Օթթաուայի Սուրբ Մեսրոպ Հայց. Առաք. եկեղեցին կալուածք պաշտօնապէս գնեց:



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepyan@gmail.com

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**

### Լաւատեսութիւնը Ամենալաւ Դեղն է. Ի՞նչ Կրնայ Ընել Լաւատեսութիւնը

Երբ կը հիւանդանանք, բժիշկի կ'երթանք, բայց շատ յաճախ ալ ոչինչ կը ձեռնարկենք՝ մտածելով, որ ինքն իրեն կ'անցնի: Ծիշող է, մեր մարմինը ինքնավերականգնող ամ բող ջուրն է, բայց մենք կրնանք օգնել անոր լաւատեսութեամբ:

Լաւատեսութիւնը նախելով կեանքին՝ մենք կրնանք, նոյնիսկ չնկատելով, յաղթել շատ հիւանդութիւններ: Եթէ ընտանիքին մէջ, օրինակ, հակուածութիւն կայ սրտանոթային հիւանդութիւններու հանդէպ, ուստի լաւատեսի մօտ այդ հիւանդութիւններէն որեւէ մէկով հիւանդանալու վտանգը երկու անգամ կը նուազի: Ուրեմն՝ լաւատեսութիւնը ամենալաւ դեղն է:

Լաւատեսութիւնը ինչո՞ւ կ'ամրապնդէ առողջութիւնը Հոգեբանները հաստատած են, որ յոռեանութեան եւ վատառողջութեան միջեւ կայ ուղղակի կապ:

Հոգեբանութեան մէջ յառաջացած է նոր ուղղութիւն՝ «դրական հոգեբանութիւն»:

Ասիկա մարդոց կը սորվեցնէ որեւէ լաւ բան գտնել նոյնիսկ անելանելի թուացող իրավիճակներու մէջ, ձեւաւորել լաւատեսական հայեացք: Ի հարկէ, լաւատեսը այն մարդը չէ, որ կը պնդէ, որ ամէն ինչ հրաշալի է, երբ իրականութեան մէջ ամէն ինչ շատ վատ է:

Իսկական լաւատեսը կրնայ ճիշդ գնահատել իրավիճակը, կը հաւատայ, որ ճիշդ քայլեր ձեռնարկելով ու աշխոյժ աշխատելով՝ շատ բան կրնայ բարեփոխել:

Հիւանդութիւնը կը ծնի մեր գլխուն մէջ՝ Տարօրինակ է, բայց շատ հիւանդութիւններ կը յառաջանան մեր գլխուն մէջ: Եթէ մենք ինկած ենք մեկամարդկոտութեան գիրկը, յուսահատած ենք կամ անտրամադիր, ուստի մեր առողջական վիճակը անմիջապէս կը վատանայ: Ի դէպ, բոլորովին կարեւոր չէ, թէ ինչու անտրամադիր ենք. եղանակը վատ է, տահուկութիւններ կան աշխատավայրին մէջ, կամ անձնական կեանքին մէջ խնդիր յառաջացած է. միեւնոյնն է, մեր դիմադրողականութիւնը անմիջապէս կ'արձագանգէ:

Իսկ եթէ, հակառակը, լաւատեսութիւնը տրամադրուած ենք, կ'արտադրուին աւելի շատ դիմադրողական բջիջներ, որոնք կը գործեն աւելի աշխոյժ: Այդ պատճառով ալ պէտք է ձգել, որ վատ տրամադրութիւնը իշխող դառնայ, կապ ունեցէք

Կենսախիռն մարդոց հետ, սօներ կազմակերպեցէք ձեր մտերիմներուն հետ: Յիշեցէք, որ անգամ վառ գոյնի ծաղիկներով փոքր ծաղկեփունջը կը բարձրացնէ ձեր տրամադրութիւնը:

### Բաւական է Ժամանակ Վատնէք Անոնց Վրայ, Որոնք Կը Խլեն Ձեր Ուժն ու Երջանկութիւնը

Բաւական է ժամանակ անցընէք անոնց հետ, որոնք կը նուազեցնեն ձեր ինքնագնահատականը, որոնք երբեք չեն կրնար ձեր մասին որեւէ լաւ բան ըսել, որոնք երբեք հաճոյա խօսութիւններ չեն ընէր, այլ միայն կը քննադատեն: Բաւական է ժամանակ անցընէք այն մարդոց հետ, որոնք չեն կրնար ուրախանալ ձեր յաջողութիւններով ու ձեռքբերումներով, երբեք ձեր հետ չեն տօներ ձեր ուրախութիւնները ու չեն գնահատեր ձեզ:

Բաւական է ժամանակ վատնէք անոնց վրայ, որոնք իրենց ձեռքէ լաւ կը համարեն ու հաշուի չեն նստիր ձեր զգացումներուն հետ, քանի որ չափէն աւելի կեդրոնացած են իրենք իրենց վրայ:

Բաւական է ժամանակ անցընէք անոնց հետ, որոնք կը ծիծաղին ձեր հետաքրքրութիւններուն վրայ, որոնք կը ստիպեն ձեզի երեխայ զգալ կամ տարօրինակ մէկը:

Բաւական է ժամանակ վատնէք անոնց վրայ, որոնք կ'ուզեն, որ դուք նոյնպիսի հետաքրքրութիւններ ու կարծիք ունենաք, ինչպէս՝ իրենք, այլապէս անոնք կը պնդեն, որ դուք սխալ էք:

Վերջ տուէք ժամանակ անցընելէ այն մարդոց հետ, որոնք ձեր վրայ բարձր են կը նային, որոնք կը թերագնահատեն այն, թէ որքան ծանր աշխատանք կը կատարէք,

որոնք կը գովեն ու կը թմբկահարեն այն ամէնը, թէ ինչ բարդ աշխատանք կը կատարեն իրենք՝ միայն անոր համար, որ դուք ամչնաք:

Բաւական է ժամանակ անցընէք այն մարդոց հետ, որոնք միայն կը խօսին ու կը խօսին, բայց չեն կրնար լսել, որոնք ձեզի կը պարտադրեն ընել այնպէս, ինչպէս իրենք կ'ուզեն, կարծես դուք պարտք էք իրենց, կարծես թէ դուք վատ ընկեր էք, եթէ կուրօրէն չընէք այնպէս, ինչպէս իրենք կ'ըսեն եւ կ'ուզեն:

Վերջ տուէք ժամանակ անցընելէ այն մարդոց հետ, որոնք ետասէր են, որոնք կ'անտեսեն ձեր վիճակը, եթէ ատիկա իրենց չի վերաբերիր, որոնք կ'ուզեն ձեզի իրենց կողքին պահել միայն այն ժամանակ, երբ դուք իրենց պէտք էք, որոնք վստահ են, որ աշխարհը իրենց շուրջը կը դառնայ:

Կարեւոր չէ, թէ դուք ինչպիսի պատմութիւն ունիք: Կարեւոր չէ, որ անտք ձեր մէջ կ'ուզեն մեղքի զգացում սերմանել. չէ՞ որ դուք «ընկերներ էք»: Նոյնիսկ, եթէ դուք կը սիրէք որոշ մարդի անցընէք, եթէ ատիկա կը վնասէ ձեր հոգեկան առողջութեան:

Բաւական է ժամանակ անցընէք այն մարդոց հետ, որոնք ձեզ կը գրկեն ուժէ, վստահութենէ ու երջանկութենէ:

### Տէր Եւ Տիպի՞ն Սարգիս Եւ Սեդա Տեմիրճեաններ

Շարունակուած էջ 8-էն  
Թիւններուն եւ ողջունեց ներկայ ժամանակներու օրինակելի գոյքին հայրենանուէր եւ ազգաշէն ծրագիրները:  
Պրն Տեմիրճեան, համեստ բարերարը, ժպտող դէմքին յայտնեց թէ, հայ բարերարներու թիւը պէտք

է բազմապատկուի եւ իրենց նուիրատուութիւնները պէտք է կատարեն հայապահպանումի այլազան ծրագիրներուն, ի շահ աշխարհափիւր մեր բազին եւ հայրենիքին:  
Բարերար Պրն Սարգիս Տեմիրճեան իր բազմաթիւ առաքիչ-նուրբութիւններու կողքին, ամենէ յատկանշականը իր համեստութիւնն է:

### Հաճելի Թուիլ Կը Նշանակէ Ե՛լ Պարգեւել, Ե՛լ Ընդունիլ

Ամէն մէկս ալ այս հարցը երբեք ուղղած ենք եւ կ'ուղղենք մենք մեզի: Իւրաքանչիւրի համար ալ հաճելի է սիրուած եւ հմա յիշ ըլլալը: Մարդուն մեծագոյն գոհունակութիւն կը պարգեւեն սեփական կարողութիւններու դրսեւորումը, հասկցուած ըլլալն ու հաւատարիմ մարդիկ ունենալը: Իսկ այդ ամէնը լիարժէք կը դառնայ, երբ կեանքը կը կապես անոր հետ, որ առաւելութիւններով ու թերութիւններով հանդերձ կ'ամբողջացնէ քեզ, որուն մէջ կայ ե՛ւ քնքշանք ու նուիրում, ե՛ւ յարգանք ու հետաքրքրութիւն: Որո՞ւն պէտք է այն մարդը, որ պիտի նուաճէ աշխարհը, բայց իր կողքին չունի անկեղծ մարդիկ, որոնք պիտի ուրախանան իր ձեռքբերումներով ու իւրաքանչիւր իրավիճակի մէջ յուսալի յենարան պիտի ըլլան:

«Համակրանքը կը համոզէ առանց խօսքերու եւ կը ստանայ առանց արժանանալու», կը մտածէր սպանացի փիլիսոփայ Պ.

Կրասիան: Եւ իսկապէս, համակրանքը յաջողութիւններու հիմքն է:

Լաւոշֆուգոյի խօսքով՝ «Ուրիշներուն հաճելի թուալու համար պէտք է անոնց հետ խօսիլ այն մասին, ինչ որ կը հետաքրքրէ իրենց, խուսափիլ քիչ-կարեւոր հարցերու շուրջ վիճաբանելէն, հագուողէս հարցեր տալ եւ ոչ մէկ պարագայի առիթ տալ կասկածելու, թէ հնարաւոր է իրենցմէ խելացի էք»:

Եթէ կ'ուզենք, որ սիրեն մեզ,

### Չիթապտուղի Օգտակարութիւնը

Հնագոյն ժամանակներէն սնունդի մէջ օգտագործուող ձիթնի պտուղները այսօր ունին աւելի մեծ տարածում, ապահոված են իրենց տեղը իւրաքանչիւր սեղանի վրայ եւ նոյնիսկ կարելի է ըսել, որ կը հանդիսանան մարդու առողջութեան «պահապան»:

Ձիթնի մշտապէս կանաչ ծառ է:

Մարմնի վրայ ոչ մէկ բացասական ազդեցութիւն ունեցող ձիթապտուղի իւղը կը պարունակէ սպիտակուցներ, A, D, K, C, B, E կենսանիւթեր, քարօթին, ինչպէս նաեւ՝ պիտֆլավոնոիտներ, եւ առհասարակ անիկա կը համարուի սնուցման աղբիւր:

Գիտնականները պարզած են, որ ձիթապտուղի իւղի բաղադրիչներէն մէկը մարդու մարմնի վրայ ունեցած հակաբորբոքային ազդեցութիւններով շատ նման է իպոլիֆրոֆենին: Այդ բաղադրիչը կրնայ

պէտք է ուրիշներու հետ խօսիլը ոչ թէ այն մասին՝ ինչ կը հետաքրքրէ մեզի, այլ այն մասին՝ ինչ կը հետաքրքրէ իրենց: Մենք երբեք չենք ձանձրացներ կիրնը, եթէ անոր հետ խօսիլը իր գեղեցկութեան մասին, եթէ հարց ու փորձ ընենք անոր իր մանկութեան, ճաշակի կամ այն մասին, թէ ինչը կը վշտացնէ գինք:

Դուք նոյնպէս երբեք չէք ձանձրացներ տղամարդը, եթէ խնդրէք իրմէ պատմել իր մասին:

Վէճերն ու խիստ ոճով շարադրուող փաստարկները հաւասարակշռութենէն կը հանեն գրուցակիցը, յատկապէս երբ ճշմարտութիւնը ձեր կողմն է: «Սիրոյ մէջ տղամարդը կը ձգտի ոչ թէ պատերազմի, այլ՝ խաղաղութեան»: Երջանիկ են քնքուշ եւ հեզաբարոյ կանայք, զանոնք աւելի շատ կը սիրեն: Ոչ մէկ բան այնքան կը հանէ տղամարդը հաւասարակշռութենէն, որքան կնոջ յարձակողական ըլլալը:

Հաճելի ըլլալու միւս միջոցը մարդոց մասին գովասանքով արտայայտուիլն է: Եթէ գովասանքի խօսք ըսէք, ատիկա մարդուն հաճոյք կը պատճառի եւ ան, ի պատասխան, կը համակրի ձեզի:

Ծիշող է նաեւ հակառակը, անբարեացակամօրէն արտասանուած անգամ մէկ խայթիլ խօսքին պատճառով ձեռք կը բերէք ռեբրիմ թշնամիներ: Յոյս տուէք, որ գոհ էք անոնցմէ, որոնց կը փափաքիք գերել: Հաճելի թուիլ կը նշանակէ ե՛ւ պարգեւել, ե՛ւ ընդունիլ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### Հարցազրոյց Գեորգ Պ. Յակոբեանի հետ

Շարունակուած էջ 14-էն  
Պոլսահայ Միութեան Մշակութային յանձնախումբի նախաձեռնութեամբ, մշակութային այլ միութիւններու մասնակցութեամբ: Երրորդ շնորհանդէսը կատարուեցաւ Հայաստանի մէջ, Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեանի նախաձեռնութեամբ:  
Այսօր ուրախութիւնն ունիմ յայտնելու, թէ Ամերիկայի Արեւմտեան թեմի բարեջան Առաջնորդ Գեորգ Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի նախաձեռնութեամբ,

Երեքշաբթի, 8 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 7.00-ին Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի սրահին մէջ պիտի կատարուի գրքիս ծանօթացումը, «Նոր Օր» շաբաթաթերթի իմ բազիր եւ ուսուցիչ՝ Հրաչ Սեփեթճեանի կողմէ:  
Այս առիթով, խորին շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի, որ ժամանակ տրամադրեցիք ինձի, ծանօթացնելով իմ կատարածաշխատանքը ձեր ընթերցողներուն:  
Հարցազրոյց վարեց՝ ԽԱԶԻԿ ԸՆԴՈՅԸՆ

### ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



**ՍԵՆՏԻՆԱԿ ԳՕՓՈՒՇԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 6 Հոկտեմբեր 2019ին, Փասադենայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մէջ 2215 E. Colorado Blvd., Pasadena CA 91107, յաւարտ Ս. Պատարագի:

Խնդրողներն են՝  
Տիկ. Մէկի Գօփուշեան  
Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Էլիզ Բարսեղեան եւ զաւակները  
Նաթալի եւ Բարսեղ  
Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Մէկի Գօփուշեան եւ զաւակը Մոնթէ

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Սեղրակ Գոբուշեանի մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյցեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Սեպուհ Գաբրիէլեանի մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեաններ իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Սեպուհ Գաբրիէլեանի մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քնար Պողարեաններ իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

## «Ձարմացուցիչն Տիեզերաց»

Շարունակուած էջ 15-էն

նական պեղումներն ու յատակագիծի վերականգնումը: Միայն 300 տարուան կեանք ունեցած է զմայլելի, բոլորաձեւ, եռալայրի ու իր տեսակին մէջ եզակի այս Տաճարը, որ փլած է 10-րդ դարու երկրաշարժին հետեւանքով: Տաղանդաւոր ճարտարապետ Թորամանեանի 1978 թուին Երեւանի մէջ յետ մահու հրատարակուած «Ձուարթնոց» անուն արժեքաւոր գիրքը Ստեփան Մնացական-եանի վերոյիշեալ հատորին հետ միասին օգտագործած եմ սոյն յօդուածին համար:

Թորամանեան 1903-ին Հայաստան յատուկ այցի գնաց եւ գործակցութեամբ ինչպէս վարդապետ Դադեանի, որ տեղւոյն վրայ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմէ պեղումներ կը կատարէր, ձեռնարկեց Ձուարթնոց Տաճարի քննութեանց, զանոնք աւարտելով 1905 թուին Մկրտիչ Ա. Խրիմեան Հայրիկ Կաթողիկոսի օրով: Իր առաջին տեղեկագրին մէջ, սպուած «Մուրճ» ամսագրի նոյն տարուոյ հինգերորդ թիւին մէջ, Թորամանեան տուած է իր տեսութիւնը Տաճարին կառուցուածքային եւ ծաւալային համադրութեան մասին, վկայելով որ «տեղին վրայ մասամբ անաղարտ մնացած է միայն յատակագիծը, որուն միջոցաւ համոզուեցայ որ գտնուած բեկորները բաւական պիտի ըլլային ամբողջ շէնքը վերակազմելու»:

Ստեփան Մնացականեանի Սպանիաի Համադրութիւնը

Մնացականեանի անկրկնելի գործը թէ՛ պատմական եւ թէ՛ ճարտարապետական սպառիչ տեղեկութիւններ կը բովանդակէ, միշտ լիշէլով եւ օգտագործելով Թորամանեանի հիմնական տուեալները: Հատորին մէջ կան մանրամասնութիւններ որոնք կը պակսին Թորամանեանի առաջին աշխատանքներուն մէջ, եւ սակայն երկուքը միասին կը կազմեն վերջնական խօսքը Ձուարթնոց Տաճարի հրաշալիքի մասին:

Մնացականեանի մօտ մանրամասնօրէն կ'երեւին Թորամանեանի մանրակրկիտ հաշիւները որոնց համաձայն Տաճարին կեդրոնէն հաւասար հեռաւորութեան վրայ գետեղուած են չորս լայնահաս եւ հաստ սիւները՝ կազմելով չորս կիսաբոլորակներ: Անոնցմէ մին «գոց պատ մըն է եւ կը կազմէ խորանը (Սեղանը), իսկ միւս երեքը սիւնազարդեր են»: Այս ձեւով Ձուարթնոցի ներքին մասը, կ'ըսէ Թորամանեան, ստացած է «կիսաբոլորակներէ կազմուած խաչաձեւ մը՝ կեդրոնը ունենալով Մկրտութեան Աւագանը»: Թորոս Թորամանեան ճարտարապետ Վաղարշապատ գալին առաջ Անիի աւերակները այցելած էր Նիկողայոս Մառի հետ իր առաջին պեղումները կատարելու համար ուր գարմանքով կը դիտէր չորս կողմ եւ չէր ուզեր հաւատալ տեսածներու իրականութեան:

## Նիկոլ Փաշինեանը Ասաց

Շարունակուած էջ 2-էն

ապա այստեղ խնդիրը արդէն յեղաշրջումը չէ, այլ այն, թէ հանրութիւնն ինչ պէտք է անի անգամ դրա վտանգի բացակայութեան պայմաններում:

Եթէ չկայ հանրային վստահութիւն վայելող վարչապետ, ապա ինչպէ՞ս է լուծուած Հայաստանի իշխանութեան հարցն ընդհանրապէս: Այստեղ է խնդիրը, ոչ թէ «յեղաշրջումներ» հիպոթեզի տարածման մէջ, որը բացի այն տարածողների որոշակի կորպորատիւ կամ քաղաքական խնդիրներից, հանրային խնդիր չի լուծում: Որովհետեւ ամէն ինչ շատ աւելի պարզ է՝ կամ երկրում կայ իշխանութիւն ձեւաւորելու ունակ հանրութիւն, կամ այդ հանրութիւնը չկայ:

Ահա այդ պարզ, բայց կարեւորագոյն խնդիրն էր շօշափում վարչապետ Փաշինեանը դեռեւս այդ պաշտօնը չստանձնած, երբ Մայիսի 8-ին ԱԺ-ում քուէարկութիւնից առաջ Հանրապետութեան

հրապարակի հարթակում արդէն իսկ յաղթած հանրութեանն ասում էր, որ մարդիկ իրենց պէտք է հաւատան, ոչ թէ Նիկոլ Փաշինեանին:

Այստեղ է որեւէ հանրութեան յաջողութեան եւ կայունութեան գրաւականը կամ «գաղտնիքը», երբ որեւէ մէկի սպասումը՝ թէ կ'իջնի առաջնորդի վարկանիշը, չունի ոչ մի նշանակութիւն, որովհետեւ երկրի ներքաղաքական իրավիճակը կառուցուած է ոչ թէ այդ վարկանիշի, այլ սեփական ուժերի հանդէպ հանրութեան վստահութեան հանդէպ:

Եթէ չկայ այդ վստահութիւնը, ապա դա յղի է կամ անիշխանութեամբ, կամ որեւէ այլ կենսունակ խումբ կարողանում է որեւէ մեթոդով երկրում ձեւաւորել իշխանութիւն, լինի դա յեղաշրջման, թէ հանրութեանը տարատեսակ «յեղաշրջումներ» վտանգի մասին վախեր սնուցելու միջոցով:

«ԼՐԱԳԻՐ»

## Տրոյ Յարկին Հիւրընկալ Գրադարանը

Շարունակուած էջ 16-էն

պատկերներով: Ինչո՞ւ այս դաշնամուրը, հարց կու տամ գրուցակիցիս, «ընթերցել, ուսումնասիրել է ետք, նօթերը դաշնամուրով փորձ ընելու համար», կը բացատրէ ան:

ԳՈՀԱՐ գրադարան տուած այցելութիւնս ահամայ հասած էր իր աւարտին: Կը պատրաստուէի մեկնելու, երբ յարգելի գրուցակիցս հրաւիրեց զիս նաեւ այցելելու մասնաւորաբար ԳՈՀԱՐ գրադարանի գիրքերուն համար հիմնուած մէկ յարկ վար գտնուող արդիական գործիքներով օժտուած կազմատունը:

«Կազմատունը ունի մասնագիտացած աշխատակազմ մը, որ արհեստագիտական բարձր մակարդակով կը կազմէ գիրքերը եւ հնամաշ ու փճացած գիրքերուն կը

վերադարձնէ անոնց իսկական պատկերն ու ոգին», կը բացատրէ գրուցակիցս:

Շշմած կը նայիմ շուրջս, ուր կազմատուն-արհեստանոց չեմ տեսներ այլեւս: Ինքզինքս կը պատկերացնեմ գունաւոր բոյսերով հարստացած կենսատու ծաղկանոցի մը մէջ, որ յարալէզներուն նման կեանք կու տայ մահուան սեմին հասած ՀԱՅ ԳԻՐՔԻՆ:

Ակամայ կը բաժնուիմ հայ մշակոյթի ծառայութեան կեդրոն դարձած՝ ԳՈՀԱՐ գրադարանէն ու կազմատունէն:

Յտեսութիւն հայ գիրք, հայ երգ, Կոմիտաս ու Մայաթ Նովա: Յտեսութիւն Կիլիկիա:

Վերստին կը տեսնուինք՝ ձեզ ու մեզ հիւրընկալող հայ մշակոյթի տան մէջ, նմանօրինակ բոլոր տուներուն մէջ՝ ուր որ ալ գտնուին անոնք:

## Զմմառ՝ «Ծննդավայր Իմ Հոգւոյս»

Շարունակուած էջ 16-էն

բուլա՛յ, բուլա՛յ վեր բարձրացող բուրումնաւէտ ծուխերը կը հաղորդեն բոլոր այն հայ հոգիներուն, որոնք գերբնական կեանքի հոգեգուարձ ապրումներուն կարօտը կը զգան եւ յաւիտենականին մտերմութիւնը կը փնտռեն:

Լիբանանի չքնաղ լեռներու

սրտին մէջ մեր հնադարեան Զմմառու հայ վանքը կը մնայ ու պիտի մնայ՝ լուսաւոր ջահ, ուր իր յարատեւ ճառագայթումովը լուսաւորչեան սուրբ հաւատքին՝ մեծագոյն հրաւէրն է միասնականութեամբը հաւատքին ամէնէն հեղինակաւոր երաշխիքը՝ հայ ազգին պայծառութեան եւ յաւերժութեան:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՍ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State: ----- Zip Code: -----  
 Country: -----  
 Tel: ----- Email: -----

# ՄԱՐԶԱԿԱՆ

## «Ռոման» Յաղթեց «Լեչէին», Հենրիխ Մխիթարեանը Կոլային Փոխանցում Կատարեց



Իտալիայի Ա սերիայի 6-րդ տուրի խաղում Հռոմի «Ռոման» հիւրընկալուելիս 1:0 հաշուով յաղթեց «Լեչէին»:

Միակ կողմ 56-րդ րոպէին Հենրիխ Մխիթարեանի փոխանցումից յետոյ խփեց էդին Ջեկոն: Հիւրերը 80-րդ րոպէին կարող էին կրկնապատկել հաշիւը, սակայն Ալեքսանդր Կոլարովը չկարողացաւ իրացնել 11մ հարուածը:

«Ռոման» այս յաղթանակից յետոյ վաստակեց 11 միաւոր եւ բարձրացաւ 5-րդ հորիզոնական, իսկ «Լեչէն» իր յարկի տակ կրեց երրորդ անընդմէջ պարտութիւնը եւ վաստակած 6 միաւորով այժմ զբաղեցնում է 15-րդ հորիզոնականը:

Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը չմասնակցեց ամբողջ խաղին, քանի որ 87-րդ րոպէին վնասուածք ստացաւ եւ ստիպուած փոխարինուած պահանջեց գլխաւոր մարզչից:

## Լա Լիգա.. Մադրիդեան Դերբին Կոլագուրկ Ոչ-ոքի Աւարտուեց

Լա Լիգայի 7-րդ տուրում մադրիդեան դերբի էր. «Աթլետիկոն» հիւրընկալել էր «Ռեալին»: «Վանդա Մետրոպոլիտանո» մարզադաշտում կայացած խաղում կոլեր չգրանցուեցին:



«Ռեալն» արդէն 7 խաղ է՝ պարտութիւն չի կրել: Նախորդ տուրերում Զիդանը սաները 4 յաղթանակ ու 2 ոչ-ոքի էր գրանցել:

«Աթլետիկոն» էլ չի պարտուած արդէն 3 խաղ: Նախորդ երկու խաղում թիմը մէկ անգամ յաղթել էր, մէկ անգամ ոչ-ոքի խաղացել:

«Ռեալը» 15 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը, իսկ «Աթլետիկոն» ունի 14 միաւոր ու 3-րդ տեղում է:

## «Բարսելոնան» Յաղթեց «Խետաֆեին» 2-0 Հաշուով

Սպանիայի առաջնութեան 7-րդ տուրում «Բարսելոնան» հիւրընկալուել էր «Խետաֆեին» ու յաղթանակ տարաւ 2-0 հաշուով:

Առաջին կէսի աւարտից 4 րոպէ առաջ թիմի դարպասապահ Մարկ-Անդրէ տէր Շոսեգենի փոխանցումից յետոյ հաշիւը բացեց հիւրերի ֆուտպոլիստ Լուիս Սուարեսը: Երկրորդ կողմ արդէն երկրորդ կէսի սկզբնամասում հեղինակեց ժուճիկը:

82-րդ րոպէին երկրորդ դեղին քարտով խաղադաշտից հեռացուեց Լենգլեն: Կատալոնացիները խաղն աւարտեցին 10 հոգով, բայց յաղթանակ տարան:

«Բարսելոնան» այս խաղից յետոյ վաստակեց 13 միաւորով բարձրացաւ 2-րդ հորիզոնական: «Խետաֆեն» 7 միաւորով 11-րդ տեղում է:

## Երրորդ Խաղում Անընդմէջ ՊՍՏ-ն Յաղթեց Նեյմարի Կոլի ՇՆորիիւ

Ֆրանսայի առաջնութեան 8-րդ տուրում ախոյեան ՊՍՏ-ն արտագնայ խաղում մրցեց «Բորդոյի» հետ: Գերմանացի թոմաս Տուխելի գլխաւորած թիմը մրցակցին պարտութեան մատնեց նուազագոյն հաշուով: Երրորդ խաղում անընդմէջ փարիզեան թիմը յաղթանակ տարաւ Պրագիլիայի հաւաքականի յարձակուող Նեյմարի կոլի շնորհիւ:

Վնասուածքից յետոյ առաջին հանդիպումն անցկացրեց ՊՍՏ-ի ֆրանսացի յարձակուող Կիլիան Մբապեն, որը երկրորդ խաղակէսում դուրս եկաւ փոխարինման եւ կատարեց կոլային փոխանցումը Նեյմարին:

ՊՍՏ-ն 6 յաղթանակից եւ 2 պարտութիւնից յետոյ 18 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ 2 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող «Նանտի» նկատմամբ:

## Սիմոն Մարտիրոսեանն՝ Աշխարհի Կրկնակի Ախոյեան Եւ Ռեկորդակիր

Թայլանդում անցկացուող ծանրամարտի աշխարհի առաջնութիւնում Հայաստանի հաւաքականի առաջատար Սիմոն Մարտիրոսեանը նուաճեց ախոյեանի կոչումը՝ 109 կգ քաշայինների երկամարտում հաւաքելով 429 կգ:

Սիմոն Մարտիրոսեանը պոկուած վարժութիւնում գրաւեց առաջին տեղը: Նա բարձրացնելով 199 կգ՝ սահմանեց նաեւ այս վարժութեան աշխարհի ռեկորդը:

Հրում վարժութիւնում Սիմոն Մարտիրոսեանը պատուիրել էր ամենաբարձր քաշը՝ 230: Հայ ծանրորդը առաջին փորձով բարձրացրեց եւ նուաճեց տիտղոսը: Մարտիրոսեանը պատուիրեց նաեւ 241 կգ (աշխարհի ռեկորդ), որը բարձրացնել էջաջողուեց:



## Արտերկրում Հանդէս Եկող 13 Ֆուտպոլիստ Հրաւիրուել է Հայաստանի Ազգային Հաւաքական

Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Արմէն Գիւլբուրդաղեանը Եւրոպայի առաջնութեան ընտրական փուլի 7-րդ եւ 8-րդ տուրերի՝ Լիխտենշտեյնի եւ Ֆինլանդիայի հետ խաղերին յայտաւորել է արտերկրում հանդէս եկող 13 ֆուտպոլիստի:

Ընդմիջումից յետոյ ազգային հաւաքական է հրաւիրուել ժոռ ժորդի Մոնրո Արարատը: Վնասուածքի պատճառով հաւաքականից հրաւէր չի ստացել Կամօ Յովհաննիսեանը:

- Արսէն Բեգլարեան, «Դնեպր» (Բելառուս)
  - Վարազդատ Հարոյեան, «Ուրալ» (Ռուսաստան)
  - Արարատ Մոնրո, «Դեպորտիւօ Բոյակօ Չիկօ» (Գոլուձպիա)
  - Անդրէ Զալըշըր «Գլոխեբորգ» (Շուեդիա)
  - Յովհաննէս Համբարձումեան, «Էնոսիս Պարալիմնի» (Կիպրոս)
  - Ռոմ յան Յովսէփեան, «Արդա» (Պուլկարիա)
  - Հենրիխ Մխիթարեան, «Ռոմա» (Իտալիա)
  - Մարկոս Պիդելլի, «Ակտոբէ» (Ղազախստան)
  - Գէորգ Ղազարեան, «ԱՆԼ Լիմասոլ» (Կիպրոս)
  - Մարգիս Ադամեան, «Հոֆենհայմ» (Գերմանիա)
  - Տիգրան Բարսեղեան, «Կայսար» (Ղազախստան)
  - Էդգար Բաբայան, «Հոբբօ» (Դանիա)
  - Ալեքսանդր Կարապետեան, «Սոչի» (Ռուսաստան)
- Հայաստանի հաւաքականն արտագնայ խաղում Լիխտենշտեյնի հետ ուժերը կը չափի Հոկտեմբերի 12-ին, իսկ Ֆինլանդիայի հետ՝ Հոկտեմբերի 15-ին:

## «Լիւերպոլը» Դժուարութեամբ Յաղթեց «Շեֆիլդին»

Անգլիայի առաջնութեան 7-րդ տուրում առաջատար «Լիւերպոլը» հիւրընկալուել էր «Շեֆիլդ Եունայթեդին»: Յուրաքանչեւ կոլպի գլխաւորած թիմը մեծ դժուարութեամբ կարողացաւ հերթական 3 միաւոր վաստակել:

«Լիւերպոլի» միակ կողմ խաղի 70-րդ րոպէին խփեց հոլանտացի կիսապաշտպան Զորջինիօ Վիյնալդուսը:

«Լիւերպոլը» 21 հնարաւորից վաստակել է 21 միաւոր եւ կը շարունակի գլխաւորել Պրեմիեր լիգայի մրցաշարային աղիւսակը: «Շեֆիլդ Եունայթեդը» 8 միաւորով 10-րդ տեղում է:

## «Մանչեսթեր Սիթին» Յաղթեց «Էվերտոնին»

Անգլիայի առաջնութեան 7-րդ տուրում ախոյեան «Մանչեսթեր Սիթին» կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորութեամբ Լիվերպոլում մրցեց «Էվերտոնի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով:

Հիւրերի կազմում աչքի ընկան յարձակուողներ, պրագիլացի Գաբրիէլ ժեզուսը, ալժիրցի Ռիյադ Մահրեզը եւ անգլիացի Ռահիմ Ստերլինգը:

«Մանչեսթեր Սիթին» 16 միաւորով երկրորդ տեղում է եւ առաջատար «Լիւերպոլից» հետ է 5 միաւոր:

## Ազգերի Լիգայում Հայաստանի Հաւաքականը Կը Խաղայ Շ Դիւիզիոնում

ՌԻԵՖԱ-ն հաստատել է Ազգերի լիգայի 2020/21 մրցաշրջանի նոր ձեւաչափը, ըստ որի A, B եւ C դիւիզիոններում կը խաղայ 16-ական թիմ, իսկ D դիւիզիոնում՝ 7:

ՌԻԵՖԱ-ի պաշտօնական կայքից տեղեկանում ենք, որ բացի Հայաստանից՝ C դիւիզիոնում հանդէս կը գան նաեւ Յունաստանը, Ալբանիան, Չեռնոգորիան, Հիւսիսային Մակեդոնիան, Կոսովոն, Բելառուսը, Կիպրոսը, էստոնիան, Սլովենիան, Լիտվան, Լիւքսեմբուրգը, Ատրպէյճանը, Ղազախստանը, Մոլդովան: